

ՊԵՐՊԵՐՆԵՆ ԱԿՐԺԵՐՆԵՆ

ԳՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՒ ՅԵՐԿԱՆՆԵՐ

ԳԼՏԻՐԷ - 1924

ՅԱՅՄԱԿԳԻՐ - ԾՐԱԿԳԻՐ

ՄՆՊ

-ԳԱԶԻՐԷ-

ՊԵՐՊԵՐԵՆՆ ԱԼԵՐԺԱՐԵՆՆ

ԳԻՇՏՐՈՌԻԿ ԵՒ ՅԵՐԵՎԱՆԵՑ

ԳԼՏԻՐԷ - 1924

Հ Ի Մ Ն Ա Գ Ի Բ Վ Ա Ր Ժ Ա Ր Ա Ն Ի Ն

Ի Կ. ՊՈԼԻՍ 1876

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵՆՆ

Հ Ի Մ Ն Ա Գ Ի Բ - Տ Ն Օ Ր Է Ն Ն Ե Ր

Վ Ա Ր Ժ Ա Ր Ա Ն Ի Ն Ի Գ Ա Ն Ի Ր Է

Օ. Ռ. ՊԵՐՊԵՐԵՆՆ

Շ. Ռ. ՊԵՐՊԵՐԵՆՆ

Վկայեալ Լօգանի Համալսարանին

Վկայեալ Բարիզի Համալսարանին

Գիտութեանց Ֆախիլթէն

Գիտութեանց Ֆախիլթէն

ՊԵՐՊԵՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Պերպերեան Վարժարանը հիմնուած է Կ. Պոլսոյ մէջ 1876 Հոկտեմբեր 1-ին: Իր նպատակը եղած է, Հիմնադրին խօսքերով, ընծայել Ազգին լուսամիտ եւ ազնուասիրտ անդամներ: Իր շուրջ կես դարու ընթացքին ունեցած է բազմաթիւ շրջանաւարտներ որոնց կեանքը լաւագոյն ապացոյցն է իր ոգիի արժեքին: Այսօր իրադարձութիւնները կուտան աննախընթաց կարեւորութիւն մը Կ. Պոլսէն դուրս, Միջերկրականի շուրջը սփռուած հայութեան. եւ Պերպերեան Վարժարանի Տնօրէնութիւնը խորապէս զգալով պատրաստութիւնը սարածելու իր գործունէութիւնը — անայլայլ պահելով նկարագրի իր գիծը — Նոր Պերպերեան Վարժարանը կը հիմնէ Գահիրէի մէջ որ բնական կեդրոն մը կը ներկայանայ հայութեան այլազան համախմբումներուն:

Պերպերեան Վարժարանը կը բացուի Գահիրէի մէջ գրեթէ օրիկ եւ ցերեկեայ աշակերտներու համար:

Հայ եւ օտար ոյժերէ կազմուած ձեռնհաս Ռսուլ-չական Մարմնի մը միջոցաւ ան կուտայ նախնական եւ երկրորդական աստիճանի ամբողջական կրթութիւն մը, որ մէկ կողմէ կատարելապէս կը պատրաստէ գործնական կեանքին, առեւտրական հրապարակը, դրամասանց ու

մեծ ընկերութեանց ասպարեզները բանալով վարժարանին ընթացաւարսներուն առջեւ եւ միւս կողմէ, անոնց որ կը փափափին մասնագիտական կրթութիւն մը ըստանալ, կ'ապահովէ եւրոպական համալսարաններու եւ նարսարագիտական բարձր վարժարաններու մուտքի իրաւունքը :

Վարժարանը ուսման չափ նախանձախնդիր է խրճանելու բարոյական ու ֆիզիքական կրթութիւնը իր աւակներսներուն, զանոնք ազնիւ եւ կորովի նկարագրով, առողջ ու քաջակազմ մարմնով հայ երիտասարդներ պատրաստելու համար :

Տնօրէնութիւնը վարժարանին համար գիշերօթիկ եւ ցերեկեայ դպրոցի առողջապահական եւ այլ զանազան անհրաժեշտ յարմարութիւնները ներկայացնող շէնք մը եւ գէտին մը ընտրած է :

Գիշերօթիկ աւակներսները կը վալլեն ընտանեկան մանրամասն խնամք եւ կ'ստանան ընկերային ազնիւ կենցաղի մը սովորութիւնները :

Վարժարանը կուտայ յատկապէս խնամուած առողջ եւ առատ սնունդ մը :

Բոլոր աւակներսները դպրոցին սեմէն ներս քէ դուրս ստարկան են բազմապիսի հոգածութեան մը որ Տնօրէնութեան ամենօրեայ նպատակն է :

Ստրել Տնօրէնութիւնս կը ներկայացնէ համառօտակի, զանազան գլուխներու մէջ, վարժարանի ուսուցման եւ դաստիարակութեան գլխաւոր կէտերը :

Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ

ա. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ

Պերպերեան վարժարանի մեջ կազմակերպուած է Ֆիզիքական խնամեալ կրթութիւն մը որ կը ձգտի, ամեն միջոցներով, ամբողջ կեանքին համար առողջ պահել, չարքաւ, ուժով եւ գեղեցիկ դարձնել աշակերտին մարմինը, այդպէս զայն գերազանց գործիք մը ու գրաւական մը ընելու՝ պատանիին մեջ զարգանալի իմացական եւ բարոյական կեանքին: Մէջընթաց որին ուրեմն, վարժարանին մեջ տիրող մթնոլորտին եական յասկանիւթերէն մին կը կազմէ:

Դպրոցը կ'աւելասի նախ իր աշակերտներուն ՏԱՌՈՂՅ ԿԵԱՆՔ ու լաւ իմացուած չարքաւ կեանքի մը սովորութիւնները: Մաքրութիւն (պաղ ջուրի սովորութիւն, յանախակի լոգանքներ), ժուժկալութիւն, բարեխառնութեան փոփոխութեանց եւ միտրոպներու դեմ ապահովութիւն, առողջաբանական ինքնաճանաչում, մոլութեանց դիմադրութիւն, կը կազմեն կարեւոր յասկութիւնները զորս վարժարանը կը շանայ ապա-

հովել իր առակերտներուն՝ դասերու եւ դասախօսութեանց միջոցաւ ու մանաւանդ ամենօրեայ կեանքին կազմակերպութեան եղանակին ազդեցութեամբ :

Վարժարանին բժիշկը միայն հիւանդութեանց պարագային համար չէ: Իւրաքանչիւր առակերտ սարին երեք անգամ կ'անցնի բժշկական ամբողջ ֆննդութեան մը, նանչցուելու համար իր կազմին ու առողջութեան իսկական վիճակին մէջ ու ըստ այնմ առաջնորդուելու համար իր կեանքին մէջ: Այս առթիւ կազմուած առողջութեան վիճակագոյցները մաս կը կազմեն իւրաքանչիւր առակերտի համար վարժարանին պահած անձնական *շարժանքի*: Հիւանդութեան մը պարագային դպրոցը յատուկ հիւանդարան սենեակի մը մէջ բժշկի եւ հիւանդապահուոյ խնամքի տակ կը դարմանէ առակերտը:

Տղայոց ֆիզիքական զօրացումը ձեռք կը բերուի մարմնամարզական զանազան դրութեանց բանաւոր կիրարկութեամբ: Բոլոր առակերտները ամէն առաւօս կը կատարեն խմբովին ճուղեական Մարզանքը որ մարմնին ներդաշնակ զարգացման եւ զօրացման լաւագոյն դրութիւններէն մին է:

Շարժարան մէջ նախատեսուած ժամերու առակերտները կը կիրարկեն նաեւ Հին Յունական *շարժանքի* մարմնակրթական խաղերը. վազել, ոսնուլ, սկաւառակ, գունտ եւ նետ արձակել:

Թե ֆիզիկական եւ քե բարոյական կրթութեան տեսա-
Անգլիական կեանք իրենց քանկագին արդիւնք-
Պաշտային Խաղեր ներուն համար Տնօրէնութիւնը կը
զննասէ նաեւ անգլիական դաշ-
տային խաղերը — *Ֆութբոլ, Կրիկէթ* եւն — զորս
կը կազմակերպէ եւ կը ֆաշալերէ դպրոցին մէջ: Յասուկ
մէտայլներ եւ պատուոյ դրօշներ կը պատուեն յունական
քե անգլիական այս զանազան մարզանքներուն մէջ նը-
շանակելի հանդիսացող աշակերտները կամ դասարա-
նական խմբակցութիւնները:

Վարժարանը պիտի ունենայ իր մասնաւոր սփառա-
Սփառութիւն կան կազմակերպութիւնը: Զօր. Պատրն
Բաուլի պատանեկան դաստիարակու-
թեան այս դրութիւնը մեծ արժեք մը կը ներկայացնէ:
Սփառական կեանք իր զանազան վարժութիւններով,
արշաւանքներով, բանակումներով եւ մանաւանդ աս-
պետական ոգւոյ իր յասկանիչներով լաւագոյն մթնոլորտը
կ'ստեղծէ պատանիներու բարոյական, իմացական եւ
ֆիզիկական գործունեութիւնները առողջ, մաքուր եւ
խանդավառ ամբողջի մը մէջ ձուլելու համար:

բ. ԻՄԱՅԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ

Ոչ քե աշակերտին միտքը ծանրաբեռնել եւ խնդել
այլ պատաստել, կազմակերպել զայն առողջ գործունեու-
թեան մը համար. այս է վարժարանին մէջ տուած իմա-
ցական կրթութեան նպատակը: Ուստի, բոլոր նիւրերը
կը ձգտին անհրաժեշտ ծանօթութիւնները եւ լեզուներու

գործնական վարժութիւնը սալով հանդերձ այդ առթիւ արբնցնել եւ կազմել մանաւանդ զլայոց դիտելու, դասելու, տրամաբանելու, գտնալու, մէկ խօսքով իրականութիւնը խորհելու եւ արտայայտելու կարողութիւնը: Իմացական կրթութեան մէջ կիրարկուած մեթոտները հետեւաբար գործունեական են մանաւանդ եւ անհրաժեշտ չափով միայն կը դիմեն զլայոց մտքի կրաւորութեան:

Լեզուները իբրեւ խորհելու սեանքի միջոցներ եւ գործնական կեանքի մէջ յաջողութեան առաջնակարգ գործիներ, կ'ուսուցունին մեծ խնամքով: Վարժարանը կ'աւանդէ բացի առ խարհաբար ու գրաբար *հայերէնէ, ֆրանսերէն եւ անգլիերէն* բոլոր կարգերուն մէջ, բոլոր առակերտաց պարտաւորիչ կերպով: Ատոնցմէ գտն իւրաքանչիւր առակերտ կը սովորի *արաբերէն, նոր յունարէն* կամ *եթովպերէն* լեզուներէն մէկը ըստ իր բնական երկրի պահանջներուն եւ ծնողաց փափաքին:

Վարժարանը կը ջանայ որ առակերտը տիրանայ որքան կարելի է կանուխէն կենդանի լեզուներու գործածման: Առ այս առաջին շորս նախապատաստական կարգերը, որոնց մէջ զլայոց տարիքը գիրենք գերազանցապէս ասակ կը դարձնէ խօսքի սովորութեանց ստացման, կը գործածուին առաւելապէս լեզուները ուսուցանելու, առանց զանց բնելու միւս նիւղերը որոնք սակայն լեզուները կիրարկելու կը գործածուին մանաւանդ: Այս կարգերուն մէջ կը գործադրուին ամենալայն չափով անմիջական, խօսեղավարժական մեթոտները, տեսական երա-

կանուքիւն եւ լեզուի բանական ու նրբին տիրացումը վերապահուելով առաւելապէս ուսումնարանի կարգե-
րուն :

Իրենց հայրայրած ծանօթութեանց ներկայ կեանքին
Գիտութիւնները մեջ ունեցած գերազանց կարեւո-
րութեանը պատճառաւ եւ մրտ-
քին իրենց տուած դրական եւ հաստատ խորհելակերպին
համար գիտութիւնները նոյնպէս, կ'ուսուցուին վար-
ժարանին մեջ հիմնովին : Ուսողութիւն, բնագիտու-
թիւն, բնալուծութիւն, բնապատմութիւն եւ մարդկա-
յին գիտութիւններ (աշխարհագրութիւն եւ պատմութիւն)
կ'աւանդուին բոլոր կարգերուն մեջ երկրորդական վար-
ժարաններու ծրագրին պահանջած աստիճանով :

Այս նիւղերուն մեջ ալ կրաւորական, դասագրքային եւ
Մէթոքը յիշողութեան միայն կոչում ընող
Գիտութեանց մէջ մեթոքներէն վնասական կերպով կը
նախընտրուի գործունեական մե-
թոքը : Առակերտը կարելի եղած չափով դէմ առ դէմ կը
դրուի ուսումնասիրելի իրականութեան եւ կը հրաւիր-
ուի դիտելու, դատելու զայն, փորձարկելու անոր վրայ,
ինքն իսկ զտնայլու անոր իսկական գիծերը եւ օրէնքը :
Առ այս վարժարանը բնագիտական ու բնալուծական
աշխատանքի մը մեջ կը կազմակերպէ առակերտաց իսկ
ձեռնով կատարուած գիտական փորձարկութիւններ : Նոյն-
պէս, առակերտք յանախ կը տարուին գիտական պտոյտ-
ներու ըլլայ բնութեան, ըլլայ կենդանաբանական եւ
բուսաբանական պարտէզներու, ագարակներու, գործա-
տուներու կամ մուսէոններու մեջ . պարտաւոր ըլլալով

յեսոյ իրենց տեսածներուն, հաւաքած իրերուն, կազմած ուրուագիծերուն, առած լուսանկարներուն մասին յասուկ տեղեկագիր մը ներկայացնելու ուսուցչին :

Պերպերեան վարժարանի Տնօրէնութիւնը Հայ իրականութեան համար կը կարծէ լուծած ըլլալ երկրորդական վարժարաններու արդիացման մեծ հարցը, վարժարանին բարձրագոյն երկու կարգերը բաժնելով երեք հասնուածներու : Աշակերտները այս կարգերուն մէջ խմբովին եւ անխօսի կը հետեւին ընդհ. զարգացումը ապահովող նիւղերուն . բայց ըստ իրենց մասնաւոր ընդունակութեանց եւ նպատակներուն կ'ընտրեն *առեւտրական, գիտական եւ դպրութեանց* հասնուածներէն մին, հոն մասնաւորաբար պատրաստուելու համար վարժարանէն վերջ ընդգրկելի ուղղութեան մէջ անմիջական յաջողութեանց :

Այս հասնուածը կը պատրաստէ վարժարանի շրջանաւարտները մտնելու ուղղակի առեւտրական ասպարէզը, դրամասուններու եւ մեծ բնկերութեանց մէջ, աշակերտներուն ստով առեւտրական վարժարանի մը ուսուցումը : Հոս կ'աւանդուին տնտեսականութիւն, առեւտրական քրթակցութիւն հայերէն, անգլիերէն եւ ֆրանսերէն լեզուներով . մեքենագրութիւն եւ սլագրութիւն, դրամասանց եւ ելեւմտական հաստատութեանց գործառնութիւններ, վաճառագիտութիւն, առեւտրական աշխարհագրութիւն եւ պատմութիւն, սնտեսագիտութիւն եւ առեւտրական օրէնրսագիտութիւն : Աշակերտները այս զանազան նիւղերուն մէջ կ'աշխատին գործնական մեթոտներով :

Ֆրանսական **լե-է-ներու** *mathématiques spéciales*-ի
Գիտական կարգին կը համապատասխանէ վարժա-
Հասուած րանին գիտական հասուածը ուր ուսա-
նողները կը պատրաստուին ուղղակի
մտնելու հարսարագիտական բարձրագոյն վարժարանները
եւ գիտական **Ֆ-է-լէ-ները** : Բնագիտութիւն եւ բնա-
պատմութիւն աւելի առաջ կը սարուին այս դասարան-
ներուն մէջ, եւ աւակերտները մասնաւորաբար կը
վարժուին ուսողութեան բարձրագոյն հիւղերուն համար :
Կը տեսնեն վերլուծական երկրաչափութիւն, եւ ուսո-
ղական վերլուծութեան տարերքը, մեքենագիտութիւն,
գծագրական երկրաչափութիւն եւ հարսարագիտական
գծագրութիւն :

Այս հասուածը մէկ կողմէ նպատակ ունի գրական ընդ-
Դպրութեանց եւ հանուր զարգացման մը առաջ-
Մանկավարժութեան նորոգելու, ինչպէս եւ պատրաս-
Հասուած տելու այն աւակերտները որ կը մը-
տադրեն եւրոպական համալսա-
րաններու դպրութեանց եւ օրէնագիտական Ֆախիլքները
մտնել. միւս կողմէ կը ջանայ լրացնել մեր մէջ վարժա-
պետանոցի մը պակասը, մանկավարժական գործնական
զարգացում մը եւ փորձառութիւնը՝ մը ապահովելով փա-
փափուլ աւակերտաց : Հասուածին աւակերտները առաջ
կը տանին հայերէն գրաբարը, կը տեսնեն լատիներէնի
տարերքը, եւրոպական եւ արեւելեան հին եւ նոր ազգե-
րու բաղդատական մատենագրութիւնը, կը վարժուին
խմաստաիրական հեղինակներու մեկնութեան. կ'ուսանին
մանկաբանութիւն, մանկավարժութեան պատմութիւն եւ
կրթական արուեստավարժութիւն :

Պերպերեան Վարժարանը իր աւանդած այս զանա-
զան գիտութիւններն ցրուած ու
Համադրութիւն առանց համադրութեան չի ձը-
գեր: Հիմնադրին օրերէն ի վեր իր յաշկանշական
նիգերէն մին եղած է համադրական ուսումներու
մէջ խստացնել եւ սեղմ խուրցի մէջ միացնել բոլոր
ծանօթութիւնները, կեանքը խորագոյնս ըմբռնելու եւ
ազնուազոյնս ապրելու կամփին վերածելու համար
զանոնք: Իմաստասիրական ուսումներն են որ կը կա-
սարեն այդ եական գործը: Վարժարանին վերին կար-
գերուն մէջ հասած ուսանողը կը հրաւիրուի նանչնալու
Եսը որ իրն է — (հոգեբանութիւն) — նանչալու ընկե-
րութիւնը որուն հետ կոչուած է բաղադրուիլ այդ Եսը
(ընկերաբանութիւն)., ու անոնց խորը ըմբռնելու եւ
սիրելու նշմարութեան (սրամաբանութիւն), գեղեցկու-
թեան (գեղեցկագիտութիւն) եւ բարոյականութեան (բա-
րոյագիտութիւն) արժեքները որոնք իր իմաստը կուտան
կեանքին: Ուսանողը կը հրաւիրուի այսպէս ի վերջոյ
Հայ Եկեղեցւոյ Աւանդութեան — ուր մեծցուած է իսլայ
սիոց — ընդելուզելու այն խորհրդածուած հաւատքը
որ անհրաժեշտ է կեանքը ապրելու համար (ընդհանուր
իմաստասիրութիւն):

Այս ուսումներն, ինչպէս կը տեսնուի, ամենէն հա-
մադրականներն ու տեսականներն մէկ տեսակետով, իբրեւ
ամենէն իրապէս եւ արդիւնաբար կերպով գործնական-
ներն կ'ըմբռնուին վարժարանին կողմէ ու կ'ուսուցուին
ըստ այնմ:

Գարոցը կ'ուզէ անոնց Չուլարանին մէջ բոլոր ծա-
նօթութիւններն ու վարժութիւնները սիրոյ եւ քաջութեան
վերածել, մէկ խօսքով ապրելու առաքինութեան:

գ. ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ

Պերպերեան Վարժարանի վերջնական նպատակը այսպէս Հայ Ազգին համար հասցնել է շիտակ եւ մա-
ֆուր նկարագրի, ազնիւ անձնաւորութեան, իրական ու
կորովի կամփի տէր Հայ երիտասարդներ: Բարոյական
կրթութիւնը Տնօրէնութեան վերին եւ ամենաեական
հոգը կը կազմէ հետեւաբար, Ֆիզիքական եւ իմացա-
կան կրթութիւններն ըմբռնուելով անոր առաջնորդող,
անոր յանգող համբաներ:

Նկարագրի, անձնաւորութեան, կամփի դաստիարա-
կութիւնը իրագործելու համար վարժարանը կը գործածէ
վերոյիշեալ իմացական ու Ֆիզիքական կազմութեան մի-
ջոցներէն զատ, նաեւ ամբողջ դրութիւն մը բուն իսկ բա-
րոյական կրթութեան, որ իրեն առարկայ ընելով աշա-
կերտներու զգայնութիւնն ու առօրեայ գործունէութիւնը,
կը ձգտի ձեւել ասոնք աշակերտը բարոյական նշմարիտ
*Տ՛ մը հասցնելու ի խնդիր:

Դպրոցին մթնոլորտը ուր ամեն օր կ'ապրի, կը շնչէ
սղան երեւութապէս ու շատերու համար
Մթնոլորտ աննշմարելի, իրապէս սակայն ամե-
նակարեւոր ազդակն է աշակերտներու բարոյական կազ-
մութեան: Տնօրէնութիւնը մեծապէս գիտակից է այս բա-
նին: Իր մշտաեւ հոգն է այդ մթնոլորտը ընել, պահել
մաքուր, կենսասու, բարոյական բռնիչի հիւրնկալ: Պեր-
պերեան Վարժարանի յասկանիւթներէն մին եղած է միտ
մթնոլորտ մը, ու այսպիսի մթնոլորտ մը ունեցած ըլլալ
ու աշիկայ իրմէ անցած հոգիներուն տուած է բարոյա-
կան անջնջելի եւ մասնաւոր երանգ մը:

Վարժարանը կը կիրարկէ լաւ իմացուած կարգապահական դրուքիւն մը: **Կարգապահութիւն** նպասակն է ոչ թէ ջնջել աշակերտին անձնաւորութիւնը զայն հրամաններ եւ կանոններ գործադրող մարդամեքենայի մը վերածելով, այլ այդ անձնաւորութիւնը բարձրացնել, զայն օժտելով հասարակաց բարձր կեանքի մը մասնակցելու առաքինութեամբբ:

Եսին մեջ թէ ընկերութեան՝ չի կայ բարձր կեանք առանց **Կարգի**: Տղան կը կրթուի այնպէս որ բարձր կեանքին յսկանիւթերէն մին եղող եւ յանախ անոր գեղեցկութիւնը շինող այդ **Կարգի**-ին պարտադրած հիգը եւ ի հարկին զրկոււմ իրագործէ եւ ընդունի հրեւուանով: Այդպէ՛ս ընկերային բարձր կեանքի ազգակ մը եղած ըլլալու գիտակցութիւնն է որ կը հիմնէ հոգիներու մեջ հեզբիտ ու հեմարիտ կարգապահութեան ոգին, ու մարմնական պատիժներն ու բռնական միջոցներն աւելորդ կը դառնան հետզհետէ: Յորդորը, արժանապատուութեան կոչոււմը ու բարոյական պատիժները — ամենքը տղուն սիրովը օժուած — կը բաւեն այսպէս վարժարանին:

Գործունէութիւնը դաստիարակելու համար թանկագին միջոց մը կը կազմէ **ձեռարուեստներու** կիրարկութիւնը դպրոցին մէջ: Ասկէ՛ այն մեծ տեղը զոր ներկայիս կուտան անոր ամերիկեան եւ եւրոպական նոր դպրոցները: Փայտէն, երկաթէն, կաշիէն, կաւէն շինելու համար մարդուն օգտակար առարկան ու զայն հաշակին ու շնորհիքին դրուածովը պատուել կարենալու համար պէտք է իրագոր-

ծել նոյն ինքն լաւ նկարագիրը բաղկացնող յասկութիւններէն շատերը : Ձեռներեցութիւն, համբերութիւն, յարասելութիւն, կասարելութեան բժախնդրութիւն, շիտակեցութիւն ու դասողութիւն, գործնական շնորհիք, խոնարհ գործին սերը, խոնարհ աշխատութեան սերը եւն եւն, նշմարիտ արուեստաւորին անհրաժեշտ յասկութիւններն են ու զանոնք ունեցող նկարագիր մը որչա՛փ մօտեցած պիտի ըլլայ լաւ նկարագրի իսեպիւն . ու ի՛նչ բարիք պիտի ըլլար երբ մեր զաւր դպրոցին մէջ զբնակին անմիջական ու գործնական առիթներ այդ յասկութիւնները զարգացնելու համար իրենց մէջ : Ձեռարուեստները անա գերազանցապէս կուտան այդ առիթները : Պերպերեան վարժարանին մէջ առայժմ փայտի, եւ աւելի վերջը ուրիշ ձեռարուեստներու համար ալ, արհեստանոցի մը մէջ աշակերտները պիտի աշխատին կանոնաւորաբար : Պիտի ըլլայ նաեւ երկրագործական աշխատութեանց համար գետին մը : Տղաքը պիտի կազմեն փոքր արհեստագետութիւն մը իր աշակերտի, արհեստաւորի եւ վարպետի աստիճաններով որ պիտի վարէ ինք իր գործերը իբր փոքր *coopératif* մը եւ որուն արտադրութիւնները նիւթեր պիտի հայթայթեն, միւս կողմէ, առեւտրական հասուածին աշակերտներուն վարժական գործառնութեանց : Փոքր գործի աշխարհ մը այսպէս նշմարիտ ու առաքինի գործի մարդուն կեանքին մէջ պիտի կրթէ պատանիները :

ԴԵՂԱՐՈՒՆՍՏՆԵՐԸ պիտի կասարելագործեն այս կրթութիւնը : Անոնք արգարեւ կը վարժեցնեն մարդը տեսնալու իրերուն բարձրագոյն ու իսկական կերպարանքը . կը վարժեցնեն մարդը ինքզինքը իր ազնուագոյն ու խո-

րագոյն ձեւին մեջ արսայայտելու : Ասով անոնք մարդոց
 տուած անխառն ու վերին հրնուանքէն զաս, բարոյական
 տեսակէտով գերազնուացման դպրոց մը կը կազմեն .
 որովհետեւ գեղարուեստից նաշակին հասած մէկը հետք-
 հետէ նուազ պիտի հանդուրժէ վարքի սգեղութեան ու
 հետզհետէ աւելի պիտի փնտռէ արարքներու գեղեցկու-
 քիւնը որ բարձր բարոյականն է : Անա ինչո՛ւ իր Հիմ-
 նադրին աւանդութեամբը Պերպերեան Վարժարանը միշտ
 առաջնակարգ կարեւորութիւն մը տուած է գեղարուես-
 տական կրթութեան :

Նայուածքի ընդգրկածին մեջ գեղեցիկը եւ էականը
Գծի-Գոյնի ըմբռնել ու ներկայացնել, ձեռքը շը-
Սրուեստներ նորհալի արսայայտիչը դարձնել աչքին
 ու երեւակայութեան պատկերներուն .,
 գծագրութեան, նկարչութեան եւ ձեւակերտութեան (*mo-
 delage*) ժամերը զանազան տեսակի վարժութիւններով —
 բնականին վրայէն գծագրութիւն, ազատ յօրինում եւն —
 այս յատկութիւնները պիտի ջանան զալ տղայոց, որ յանախ
 բնական շնորհ մը ունին անոնց համար : Գեղագրու-
 քիւնը եւ իրեն կապուած տեսակը խնամելու արուեստը
 — որ կ'ըմբռնուի իբր դպրոցին յատուկ գեղարուեստ մը
 — պիտի ամբողջացնեն այս կրթութիւնը :

Երգել' ու ազնուական շարժումներուն վարժուիլ այդ
Ձայնի եւ Շարժման երգովը ներշնչելով շարժով մար-
Սրուեստներ միւր ., երաժշտութեան եւ անոր
 կապուած պարի — *Տարբերակ*
 ու Հայկական պարի — դասերը կը ձգտին այս շնորհ-
 ներով օժտել տղաքը : Վարժարանը կ'ունենայ իր երգչա-

խումբը եւ պարախումբը : Փափափուկներ կրնան նաեւ
ստանալ ջուրակի եւ դաշնակի դասեր :

Գրականութիւնը վերջապէս ու անոր կապուած շա-
րադուրեան, արտասանութեան
Խօսքի Արուեստներ ու հրապարակախօսութեան ար-
ուեստները կենդանի ուսուցման մը առարկան կը կազ-
մեն : Այս ուսուցման նպատակն է պատանին մղել հաս-
կընալու եւ սիրելու գրականութիւնը ու զայն վար-
ժեցնել անկեղծ, նեմարիս ու ազնիւ խօսք գրելու եւ
խօսելու :

Բոլոր այս գեղարուեստներուն մէջ Հայ Ազգային,
Տոհմային նկարագիրն է որ դպրոցը նախանձախնդիր է
շեշտելու : Այսպէս դպրոցը կ'ուզէ նոր սերունդին մէջ
ազգակ մը ըլլալ հայ մշակոյթին նեմարիս գնահատու-
թեանն ու զարգացման, հայ ինքնուրոյն մշակոյթին՝ որու
ընկերային եւ գեղագիտական արժեքին ու կարելիութեանց
խորապէս կը հաւատայ :

Ձեռարուեստներու եւ գեղարուեստներու արքնցուցած
Ընկերային շնորհի ու նկարագրի այս յատկու-
Բարեկրթութիւն քիւնները վարժարանը նախան-
ձախնդիր է անմիջապէս օգտա-
գործելու եւ հակակեռելու աշակերտներու ընկերային
բարեկրթութեան կազմութեան մէջ : Աշակերտներէն կը
պահանջուի հազուաժամին, խօսուաժամին, փալուաժամին,
բարեւիս, շարժուածեւերուն, նաշին մէջ ազնուաձեւ,
նեմարտապէս բարեկիրք ըլլալ : Առ այս բոլոր աշակերտ-
ներու եւ մասնաւորաբար գիշերօթիկներու կեանքը, ըն-
կերային ու ընտանեկան միջավայրի տպարիս վրայ կազ-

մակերայուած է: Ճաշասեղանը, ընկերային հաւաքումները, հանրային կեանքի մասնակցութեան ժամերը միջոցներ կը նկատուին բարեկիրք կեանքի սովորութիւնները զարգացնելու անոնց մէջ:

Դպրոցական սովորական զբաղումներէն դուրս աշա-

Ընկերային

Գործունէութիւն

կերտաց առիթ կը տրուի վարժարանին մէջ ապրելու ընկերային կեանք մը ուր պէտք է, մեր տոհմային գլխաւոր պակասներէն մին կազմող, հաւաքական համեմատելի ու ազնիւ գործունէութեան վարժուիլն:

Աշակերտները իրե՛նք կը կազմակերպեն հաւաքոյթները, հանդէսները, դպրոցական տարրական կարգապահութիւնը, մատենարանի, արհեստանոցի, գիտական աշխատանոցներու, դասարաններու խնամքը, ընկերային բարի գործակցութեան ոգւով: Դաստիարակները կը հսկեն որ այդ զանազան գործունէութեանց մէջ նորաբողբոջ Ետերը վարժուին այլասիրտէն բազադրուելու եւ ընկերային կեանքը յօրինելու եական արուեստին:

Տնօրէնութեան շանքն է այսպէս վարժարանը ընել մի-

Նկարագրի

Սնհատական

Մշակում

շավայր մը որ արքնցնէ, կազմութեան հրաւիրէ ու զօրացնէ հայ ազնիւ ու ընկերային անձնաւորութեան, կորովի ու շիտակ նկարագրի բոլոր ձգտումներն ու յատկութիւնները: Եւ քէ աշակերտը իրապէս ու խորապէս կը կազմուի այդ ուղղութեամբ, այդ կ'ստուգէ իւրաքանչիւրով հետաքրքրուելով եւ դաստիարակներէն միտն միջոցաւ մօտեցալով իւրաքանչիւր աշակերտի: Իր հոգւոյն հասուննալու լայդ տարիքին իւրաքանչիւր պա-

սանի դաստարակ մը կ'ունենայ այսպէս իրեն մօտէն կապուած, զինքը մօտէն մղուլ ու կազմող, զինքը ներսէն կրքող: Առակերտին Ֆիզիքական եւ իմացական վիճակացոյններուն կցուած բարոյական վիճակացոյց մը ծրնուլքը իրագեկ կը պահէ իր որդւոյն նկարագրին զարգացմանը զանազան բուլերուն եւ երեւոյթներուն:

Գարոցին ազգային մթնոլորտովը սնող, մարզական եւ
Տեսլականի ձեռարուեստային գործունեութեամբ,
Մշակում իմացական եւ ազգային գեղարուեստական կեանքովը ապրող ու մեծցող պատանիի հոգիին մէջ դաստարակը դիւրութիւն պիտի ունենայ, վերջապէս, արքնցնելու, գոյութեան եւ ոյժի կոչելու իսեալներ: Հայ Ազգային Եկեղեցին արտերբ բարձրացնելու իր սարօրինակ ոյժովը կը ներկայանայ անբալդասելի օժանդակը վարժարանին, պատանեկան կեանքը դրուելու Հայ Ազգային ոգւով ու տեսլականով ու մարդկային գերագոյն արժեքներուն հաւաստովը: Վարժարանը պիտի գիտնայ Հայաստանեայց Եկեղեցիի ծոցին մէջ ամենուն հաղորդակցութեան գերագոյն պահերուն՝ իրագործել իրեն յանձնուած հոգիներու խորը այդ գերագանց ձեւակերպումը:

Բ. ՀԱՄԱՌՕՏ ԾՐԱԳԻՐ

ՈՒՍՄԱՆՑ

Պերպերեան վարժարանը կուսայ Ֆրանսական բարձրագոյն Լիսէնտը Էւ Անկլօ-Սախսոն Գօլէններու համարժեք աստիճանով նախնական Էւ Երկրորդական ուսում: Վարժարանը ունի ինը դասարաններ որոնց առաջին չորսը յատկացուած են նախակրթութեան Էւ վերջին հինգը Երկրորդական կրթութեան: Բնականաբար նախակրթական կարգերու ծրագիրը իբր յաջորդ տարիներու նախապատրաստութիւն ըմբռնուած է. նախակրթարանի մը մեջ աւանդուած բոլոր գիտելիքը կ'ուսուցուի հոն տղայոց, բայց լեզուա՛ց առաւելապէս ոյժ կը տրուի: Ուսումնարանի կարգերուն բոլոր աշակերտները կը տեսնեն Երկրորդական Վարժարաններու ծրագիրը լեզուաց, դպրութեանց Էւ գիտութեանց մեջ. բացի ասկէ ըստ իրենց ապագայի նպատակներուն՝ բարձրագոյն երկու դասարաններու աշակերտները կը բաժնուին նաեւ երեք հասուածներու, *սիւսթեմայի*, *դպրութեանց* Էւ *աւելորակ* *ուսմանց* երեք նիւղերէն միոյն մեջ մասնաւոր պատրաստութիւն մը ձեռք բերելու համար:

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ — ԵՐԱԽԱՅԻՑ Ա. ԿԱՐԳ

Կրօնական եւ Բարոյական Կրթութիւն. 1 (*) պահ.—
Կրօնական և բարոյական մեծ դէմքերու և նշանակա-
լից դէպքերու մասին պարզ պատմութիւններ և խօ-
սակցութիւններ:

Հայերէն. 6 պահ.— Հայերէն աշխարհաբար փոքր
հատուածներու ընթերցանութիւն և բացատրութիւն.
լեզուական տարրական վարժութիւններ. ուղղագրու-
թիւն. բերանացի արտայայտութիւն. փոքր արտասա-
նութիւններ:

— Մեղրագետ, բ. տարի. Ռ. Զարդարեան:

Ֆրանսերէն. 9 պահ.— Առողջանութիւն և խօսե-
լավարժութիւն անմիջական մէթոտով: Լեզուական
տարրական վարժութիւններ, ուղղագրութիւն: Ընթեր-
ցանութիւն և Ֆրանսերէնէ ի հայ ու փոխադարձ թարգ-
մանութիւն. փոքր արտասանութիւններ:

— Méthode Berlitz. Ա. գիրք գաղի. ի հայ թարգ-
մանութեան. Ռ. Յ. Պէրպէրեան:

(*) Պահերու թիւը շարաթուան համար է:

Անգլիերէն. 5 պահ.— Նոյն ծրագիրը անգլիերէնի մէջ :

— Berlitz Method. The Royal Reader, ա. գիրք :

Արաբերէն կամ Արգի Յունարէն կամ Եթովպերէն. 2 պահ.— Ընտանի նիւթերու վրայ առողջանութեան և խօսելու պարզ փորձեր :

Ուսողութիւն. 3 պահ.— Փորձնական միջոցներով ընտանեցում ամբողջական և կոտորակաւոր թիւերու զազափարին հետ. թիւերու ընթերցում. չորս գործողութիւններ, գործնական խնդիրներ անոնց գործածութեան համար : — Երկրաչափական ամենապարզ ձեւերը. կարկինի և քանակի գործածութիւնը զանոնք կազմելու համար : Թիւերու կիրարկումը ձեւերու և փոխադարձաբար : Կիրարկութիւններ ձեռական աշխատութեանց մէջ :

— Թուարանութիւն՝ Գ. Գալաֆեան, տարրական դասընթացք :

Աւսարհագրութիւն և Իրագիտութիւն. 1 պահ.— Բնութիւնը, երկինքը, երկիրը, հողը և ջուրերը : Եղանակները, մարդուն աշխատութիւնը, մարդուն օգտակար իրերը. գիւղը, քաղաքը : Պատրաստութիւն քարտէսը հասկնալու համար. դասարանին, գպրոցին, պարտէզին յատակագիծը :

— Leçons de Choses, Colomb.

Պատմութիւն. 1 պահ.— Հայոց աւանդական և պատմական մեծ դէմքերը և նշանակալից դէպքերը :

— Հայոց Պատմ. Գէորգ Մեսրոպ, տարր. ա. տարր. :

Երաժշտութիւն և Կեռական Մարզանք. 2 պահ.—
Ջայն և ձայնանիշ, երաժշտական ընթերցման պարզ
վարժութիւններ: Ջայներու շարժմամբ ներկայացման
պարզ վարժութիւններ: Խմբական երգի և պարի փոր-
ձեր. միաձայն և երկձայն երգեր:

Գծագրութիւն. 1 պահ.— Բնականին վրայէն գը-
ծագրում շատ պարզ առարկաներու. միեւնոյն առար-
կաներուն յիշողութեամբ ներկայացումը. գունաւոր
մատիտի գործածութիւն. ազատ գծագրութիւն, պար-
տականութեանց պատկերազարդում: Կաւով աշխա-
տութիւն:

Գեղագրութիւն. 1 պահ.— Պարզ և գլխագիր տա-
ռերու գրավարժութիւն հայերէն և ֆրանսերէն:
Տետրակի խնամքը և հարթարանքը:

Չեռական Աւիստութիւն. 2 պահ.— Թուղթով,
խաւաքարտով և փայտով նախնական աշխատութիւն-
ներ:

ԵՐԿՐՈՐԳ ՑԱՐԻ — ԵՐԱԿԱՅԵՅ Բ. ԿԱՐԳ

Կրօնական և Բարոյական Կրթութիւն. 1 պահ.—
Նախնական և պարզ պատմութիւն Հին Ուխտի: Ըն-
տանեցում բարոյական իրականութիւններու հետ, զա-
նոնք արտայայտող բառերու բացատրութիւնը. բարո-
յական պատմութիւններ:

— Կրօնքի Գիրք. Մաշթոց, ա. տարի:

Հայերէն. 6 պահ.— Հայերէն աշխարհաբար հատուածներու ընթերցում և բացատրութիւն: Լեզուական վարժութիւններ և գլխաւոր կանոններ. ուղղագրութիւն: Բերանացի արտայայտութիւն, արտասանութիւն. փոքր շարագրութիւններ:

— Մեղրագետ, Ռ. Զարգարեան, միջին ա.:

Ֆրանսերէն. 9 պահ.— Առողանութիւն և խօսելավարժութիւն անմիջական մեթոտով. բառագիտութիւն: Լեզուական կանոններ և վարժութիւններ նսխադասութեան տարրերու գործածութեան վրայ: Ուղղագրութիւն: Ընթերցանութիւն և թարգմանութիւն ֆրանսերէնէ ի հայ և փոխադարձաբար: Փոքր արտասանութիւններ. փոքր շարագրութիւններ:

— Méthode Berlitz. Ա. գիրք ֆրանսերէնէ ի հայ թարգմանութեան, Ռ. Յ. Պ.:

Անգլիերէն. 5 պահ.— Նոյն ծրագիրը անգլիերէնի մէջ:

— The Royal Reader ա. տարի, Berlitz Methode ա. գիրք:

Արաբերէն կամ Արդի Յունարէն կամ Եթովպերէն. 2 պահ.— Առողանութիւն և խօսելավարժութիւն. կարգալու, գրելու և թարգմանելու առաջին վարժութիւններ:

Ուսողութիւն. 3 պահ.— Ամբողջական և կոտորակաւոր թիւերով չորս գործողութիւններ և անոնց կիրարկումը պարզ խնդիրներու լուծման: Մէղրական

դրութիւնս — Երկրաչափական գլխաւոր ձեւերը, զանոնք
չափելու վարժութիւններ. կիրարկում այս վարժու-
թեանց ձեռական աշխատութեանց մէջ:

— Թուարանութիւն, Գ. Գալաֆեան, միջին ըն-
թացք:

Պատմութիւն. 1 պահ. — Հայ և օտար աւանդա-
կան և պատմական մեծ դէմքեր և դէպքեր:

— Հայոց Պատմութիւն, Գէորգ Մեսրոպ, տարր.
բ. տարի:

Աւխարհագրութիւն և Իրագիտութիւն. 1 պահ. —
Տարրական գիտելիք ընդհ. աշխարհագրութեան. արե-
գականային դրութիւնը, երկիրը, իր կազմուածքը,
գլխաւոր մասերը. քարտէսի գործածութիւն: Մարդը,
իր պէտքերը և սնունց գոհացումը. ժողովուրդները:

— Աշխարհագրութիւն, Յ. Պապեսեան, ա. տարի:
Leçons de Choses, Colomb.

Նրաժեսութիւն և Կեռական Մարզանք. 2 պահ. —
Շարունակութիւն և ընդլայնում նախորդ տարուան
ծրագրին:

Գծագրութիւն և Գեղագրութիւն. 2 պահ. — Շարու-
նակութիւն և ընդլայնում նախորդ տարուան ծրագրին:

Ձեռական Աւխատութիւններ. 2 պահ. — Փայտի
աշխատութիւններ, պատրաստութիւն փոքր առարկա-
ներու և զարդարում:

Կրօնական և Բարոյական Կրթութիւն. 1 պահ. — Նախնական և պարզ պատմութիւն Նոր Ուխտի: Առակներուն բարոյական նշանակութիւնը:

— Կրօնքի Գիրք՝ Մաշթոց. ր. տարի:

Հայերէն. 6 պահ. — Հայերէն աշխարհաբար հատուածներու ընթերցում և բացատրութիւն: Գործնական քերականութիւն և լեզուի վարժութիւններ. ուղղագրութիւն: Բերանացի արտայայտութիւն և արտասանութիւն. փոքր շարագրութիւններ:

— Մեղրագետ՝ Ռ. Զարգարեան, յիշին ր., Հայերէնի ընթ. Հ. և Զ. Ասատուր, ր. տարի:

Ֆրանսերէն. 9 պահ. — Առողանութիւն և խօսելաձարժութիւն անմիջական մէթոտով: Բառագիտութիւն: Լեզուական կանոններու վրայ բերանացի և գրաւոր վարժութիւններ. ուղղագրութիւն: Ընթերցում և թարգմանութիւն Ֆրանսերէնէ Հայերէն և փոխադարձաբար: Արտասանութիւն. փոքր շարագրութիւններ:

— Méthode Berlitz. ր. գիրք. Choix de Lectures (cours moyen 1^{er} degré), Mironneau.

Անգլիերէն. 4 պահ. — Նոյն ծրագիրը անգլիերէնի կիրարկուած:

— Berlitz Method. The Royal Reader, գ. գիրք:

Արաբերէն կամ Արդի Յունարէն կամ Եթովպերէն.

2 պահ. — Պօսեղա վարժութիւն, ընթերցում և թարգմանութիւն. լեզուական վարժութիւններ, ուղղագրութիւն:

Ուսողութիւն. 3 պահ. — Թո՞ւ-ա-բ-ն-ո-ւ-ն-ի-ն. վերաքաղ. կոտորակ, խառն թիւեր, մէթրական գրութիւն: Չորս գործողութիւններ, խնդիրներ: Երկրաչափութիւն. գիծերու, եռանկիւններու, բազմանկիւններու և շրջանակի յատկութիւնները. կիրարկում թուաբանութեան: Երկրաչափական գաղափարներու կիրարկում ձեռական աշխատութեանց մէջ:

— Թուարանութիւն՝ Գ. Գալաֆեան. միջին ընթացք:

Աւխարհագրութիւն. 1 պահ. — Ժողովուրդները և պետութիւնները. պետական և տնտեսական կեանքի կազմակերպութիւնը: Սահման, հաղորդակցութեան միջոցներ, քաղաքներ ևւն. իրր օրինակ Հայաստանը, Եգիպտոսը: Աշխարհագրութիւն այս երկիրներու: Համառօտ աշխարհագրութիւն Եւրոպայի:

— Աշխարհագրութիւն՝ Արեղեան, տար. ընթացք:

Իրազիսութիւն. 1 պահ. — Կենդանիները, իրենց ապրուածքը. ընտանի կենդանիներ, վայրի կենդանիներ. թռչունները, ձուկերը. մանրաշխարհը: Բոյսերը, անտառը, բոյսերու կեանքը:

— Բնագատմութիւն Ա. Նիկողոսեան:

Պատմութիւն. 1 պահ. — Պատմական ժամանակը և իր գլխաւոր բաժանումները: Հին շրջանը լեցնող գըլ-

խաւոր ժողովուրդներու կեանքի նշանակալից շրջանները, հայ ժողովուրդի ժամանակագրութեան կապելով միւսները. հին աշխարհի պատմական քարտէսը :

— Հայոց Պատմութիւն՝ Գէորգ Մեսրոպ, միջին ասարի :

Երաժշտութիւն և Կեռական Մարզանք. 2 պահ.— Շարունակութիւն նախորդ տարիներու վարժութեանց :

Գծագրութիւն և Գեղագրութիւն. 2 պահ. — Շարունակութիւն նախորդ տարիներու վարժութեանց :

Ձեռական Աշխատութիւնք. 2 պահ.— Շարունակութիւն նախորդ տարիներու վարժութեանց :

ԶՈՐՐՈՐԳ ՏԱՐԻ — ԵՐԱՆԱՅԻՅ Գ. ԿԱՐԳ

Կրօնական և Բարոյական Կրթութիւն. 2 պահ.— Ընտանեցում Հայ Եկեղեցւոյ հետ. եկեղեցին, սրբազան առարկաները, նաւիրապետութիւնը, գլխաւոր արարողութիւնները և խորհուրդները : Բարոյական ընթերցումաձք :

— Է. Տէ Ա.միջին՝ Սիրտ :

Հայերէն. 5 պահ.— Բացատրեալ ընթերցանութիւն հայերէն աշխարհաբար հատուածներու : Գործ-

նական քերականութիւն, ուղղագրութիւն: Բերանացի արտայայտութիւն և արտասանութիւն: Շարագրութիւններ:

— Մեղրագետ, Ռ. Զարգարեան, Ե. տարի — Հայերէնի ընթացք, Հ. և Զ. Ասատուր, Գ. տարի:

Ֆրանսերէն. 9 պահ. — Առողանութիւն և խօսելավարժութիւն: Լեզուական գլխաւոր կանոնները: Ուղղագրութիւն: Ընթերցանութիւն և թարգմանութիւն հատընտիր հատուածներու, փոխադարձ թարգմանութիւն: Արտասանութիւն: Փոքր շարագրութիւններ:

— Méthode Berlitz Բ. գիրք: Choix de lectures (moyen 1^{er} et 2^{me} degrés) Mironneau.

Անգլիերէն. 5 պահ. — Նոյն ծրագիրը կիրարկուած անգլիերէնի:

— Berlitz Method. The Royal Reader. Դ. գիրք:

Արաբերէն կամ Արբի Յունարէն կամ Եթովպերէն. 2 պահ. — Շարունակութիւն նախորդ տարուան ծրագրին:

Ուսուցիչիւն. 3 պահ. — Թուրքական-Ռիւն. վերաբաղ. միութեան կանոն, տասանորդական թիւեր. տուկոս, զեղչ. յատկութիւն թուոց: — Նիւրաւադ-Ռիւն. վերաբաղ. ծաւալներ և անոնց չափումը. կիրարկուած հեռական աշխատութեանց:

— Թուրքանութիւն՝ Գ. Գալաֆեան, միջին և բարձրագոյն ընթացք:

Իրագիտութիւն. 1 պահ. — Երկիրը և երկրաբանական գլխաւոր իրողութիւնները: Ֆիզիքական և քիմիական գլխաւոր երեւոյթներ:

— Բնապատմութիւն՝ Ա. Նիկողոսեան:

Աշխարհագրութիւն. 1 պահ.— Աշխարհի հինգ մասերը, գլխաւոր պետութիւններ: Մեծ ճանապարհորդութեանց պատմութիւնը:

— Աշխարհագրութիւն՝ Արեգեան, ա. տարի:

Պատմութիւն. 1 պահ.— Նախորդ տարուան ծրագիրը կիրարկուած Նոր Շրջանին:

— Հայոց պատմութիւն, Գէորգ Մեսրոպ, միջին բ. տարի:

Երաժշտութիւն և Կեռական Մարզանք. 2 պահ.— Շարունակութիւն նախորդ տարիներու ծրագրին:

Գծագրութիւն. 1 պահ.— Շարունակութիւն նախորդ տարիներու ծրագրին:

Գեղագրութիւն. 1 պահ.— Շարունակութիւն նախորդ տարիներու ծրագրին:

Չեռական Աշխատութիւնք. 2 պահ.— Շարունակութիւն նախորդ տարիներու ծրագրին:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ — ԿՐՏՍԵՐԱԳՈՅՆՔ

Կրօնական և Բարոյական Կրթութիւն. 1 պահ.—
Հին կտակարանը, գլխաւոր մասերու ընթերցում և
բացատրութիւն: Քաղաքացիական կրթութիւն:

— Օգտագործելի՝ Հին կտակարանը:

Հայերէն. 5 պահ.— Գրաբար. ընթերցում գրաբար
պարզ կտորներու և թարգմանութիւն աշխարհաբարի.
փոխադարձ թարգմանութիւն. լեզուական կանոններ
ու վարժութիւններ, փոքր շարագրութիւններ: Աշ-
խարհաբար. Բացատրեալ ընթերցանութիւն հատընտիր
կտորներու. քերականութիւն. շարագրութիւն:

— Ընթացք ի Գրոց Բարբառ, Ե. Արք. Դուրեան, ա.
տարի. Թանգարան, Հ. և Զ. Ասատուր, Բարձրագոյն:
Քերականութիւն Աշխ., Հ. և Զ. Ասատուր:

Ֆրանսերէն. 6 պահ.— Խօսելաւարժութիւն: Ըն-
թերցանութիւն և թարգմանութիւն. հայերէնէ Ֆրանս.
թարգմանութիւն: Քերականութիւն, ուղղագրութիւն:
Շարագրութիւն:

— Cours Moyen, 2^{me} degré, Mironneau. Grammaire, La-
rive et Fleury (2^{me}).

Անգլիերէն . 3 պահ .— Նոյն ծրագրի կիրարկումը
անգլիերէնի :

— Berlitz Method. The Royal Reader, Ե. Գիրք :

Արաբերէն կամ Արդի Յունարէն կամ Եթովպերէն .
2 պահ .— Կիրարկում նոյն ծրագիրին այս լեզուներուն :

Ուսողութիւն . 5 պահ .— Թուաբանութիւն . (2) Կո-
տորակներու չորս գործողութիւն , կարողութիւն և
արմատ , համեմատութիւն , առեւտրական կանոններ ,
տոկոս , զեղչ եւն : Գրահաշիւ . (2) Նախագիտելիք , առա-
ջին աստիճանի հաւասարութիւն մէկ և աւելի անձա-
նօթով , խնդիրներ : Երկրաչափութիւն . (1) Մակարդակի
երկրաչափութիւն , տեսութիւններու ապացուցմամբ և
խնդիրներով :

— Թուաբանութիւն՝ Գ. Գալվաֆեան : Algèbre, C.
Bourlet. Éléments de Géométrie Plane, Bos.

Բնագիտութիւն . 1½ պահ .— Մանրութեան երեւոյթ-
ներ . ջերմութիւն և ձայն . համառօտ տեսութիւններով :

— Cours élémentaire de physique (Cl. de 4^me) Lemoine
et Vincent .

Բնապատմութիւն . 1½ պահ .— Կենդանիները , իրենց
գասակարգութիւնը , կազմախօսութիւն ու բնախօսու-
թիւն :

— Sciences naturelles, Caustier .

Աշխարհագրութիւն . 1 պահ .— Ընդհ. Աշխարհա-
գրութիւն :

— Օգտագործելի՝ Géographie Générale: Schrader et
Kergomard .

Պատմութիւն. 2 պահ.— Հին Արեւելքի ազգեր,
իրենց բարքերը, արուեստը, կրօնքը և պետական
կեանքը, գլխաւոր գիծերով:

— Հին Արեւելք, Խաժակ:

Երաժշտութիւն և Կռական Մարզանք. 2 պահ.—
Սօլֆէժ և համառօտ երաժշտական տեսաբանութիւն:
Երաժշտութեան թարգմանութիւնը շարժուձեւերուն
մէջ. անհատական և խմբական պարի փորձեր: Խըմ-
բերգական մարզանք. միաձայն և բազմաձայն երգեր
հայկական և եւրոպական երաժշտութիւնէ:

Գծագրութիւն. 1 պահ.— Բնականին վրայէն գը-
ծագրութիւն, յիշողութեամբ գծագրութիւն. զարդա-
կան շարախմբում. գոյներու գործածութիւն. ազատ
գծագրութիւններ, պարտականութեանց պատկերա-
զարդում: Կաւով ձեւակերտում:

Գեղագրութիւն. 1 պահ.— Վայելչագրութիւն. զար-
դագիր: Տեորակի խնամք և գեղազարդում:

Ձեռարուեսներ. 2 պահ.— Փայտի և կաշիի վրայ
աշխատութիւններ. օգտակար առարկաներու պատ-
րաստութիւն և վայելուչ զարդարանք:

Կրօնական և Բարոյական Կրթութիւն. 1 պահ.—
Նոր Կտակարանը. ընթերցումներ Աւետարանէն և բացատրութիւն: Քաղաքացիական Կրթութիւն:

— Օգտագործելի՝ Նոր Կտակարանը:

Հայերէն. 4 պահ.— Գրաբար. Թարգմանութիւն և բացատրութիւն հատընտիր կտորներու սկեզարեան գրաբարի. փոխադարձ թարգմանութիւն. քերականութիւն. փոքր շարագրութիւններ: Աշխարհ-բար. Բացատրեալ ընթերցանութիւն հատընտիր կտորներու Արեւմտահայ արդի հեղինակներէ. գրական և մատենագրական ծանօթութիւններ: Քերականութիւն և ուղղագրութիւն: Շարագրութիւն:

— Ընթացք ի Գրոց Բարբառ, Ե. Արք. Գուրեան: Գրաբար Քերականութիւն, Գափամաճեան: Մեղրագետ, Զ. տարի:

Ֆրանսերէն. 5 պահ.— Ընթերցում, Ֆրանսերէնով բացատրութիւն և թարգմանութիւն հատընտիր կտորներու: Հայերէնէ Ֆրանսերէն թարգմանութիւն: Քերականութիւն. ուղղագրութիւն: Շարագրութիւն:

— Boucley et Garinot: Textes choisis d'explication Française. Grammaire, Larive et Fleury 3^{me} Année.

Անգլիերէն. 3 պահ.— Նոյն ծրագիրը կիրարկուած անգլիերէնի:

— Berlitz Method. The Royal Reader. 4. գիրք:

Արաբերէն կամ Արդի Յունարէն կամ Երովպերէն.
2 պահ.— Խօսելավարժութիւն. ընթերցում, թարգ-
մանութիւն. քերականութիւն. շարագրութիւն:

Ուսողութիւն. 5 պահ.— Թուաբանութիւն, (1). տոկոս,
գեղջ, համեմատական բաշխում. խառնուրդ. յարակցու-
թիւն. առ հարիւր խնդիրներ: — Գրահաշիւ (2). Երկ-
րորդ աստիճանի հաւասարութիւն. երեւակայական
քանակութիւններ. խնդիրներ: — Երկրաչափութիւն (2)
Մակարդային բոլոր ձեւերու յատկութեանց մասին
ապացուցական տեսութիւններ: Միջոցի երկրաչափու-
թիւն:

— Թուարանութիւն, Գ. Գալաֆեան, բարձագոյն:
Algèbre, C. Bourlet. Éléments de Géométrie (dans l'espace)
Bos.

Բնագիտութիւն. 2 պահ.— Լոյս, էլեքտրականու-
թիւն և մաքնխտականութիւն: Համառօտ և ընդհանուր
տեսութիւն:

— Cours élémentaire de physique. (Cl. de 3^{me}) Lemoine
et Vincent.

Բնալուծութիւն. 1 պահ.— Ընդհանուր քիմիագի-
տական ծանօթութիւններ. Գլխաւոր տարրերը և բա-
ղադրութիւնները:

— Chimie élémentaire (Cl. de 4^{me}) Matignon et La-
miraud.

Բնապատմութիւն. 1 $\frac{1}{2}$ պահ. — Բոյսերը, իրենց
կեանքը, իրենց դասակարգութիւնը. գլխաւոր տի-
պարներու կազմախօսութիւնն ու բնախօսութիւնը:

— Botanique, Caustier.

ԱՇԽԱՐԻԱԳՐՈՒՄԻՆ. 1 1/2 պահ.— Բնական, քաղաքական և տնտեսական աշխարհագրութիւն Ասիոյ, Աֆրիկէի, Ամերիկայի և Ովկիանիոյ:

— Աշխարհագրութիւն Արեղեան, ք. տարի:

Պատմութիւն. 2 պահ.— Պատմութիւն Յունաց մինչև Հռովմէական տիրապետութիւնը: Պատմութիւն Հռովմի մինչև Կայսրութիւն: Հայոց Պատմութեան համապատասխան շրջանը:

— Histoire (Grèce et Rome), P. Maillefer. Պատմութիւն Հայոց, Պալասանեան:

ԵՐԱԺԵՏՈՒՄԻՆ և ԿԵՈՒԿԱՆ ՄԱՐԳԱՆԲ. 2 պահ.— Շարունակութիւն նախորդ տարուան ծրագրին:

ԳԾԱԳՐՈՒՄԻՆ և ԳԵՂԱԳՐՈՒՄԻՆ. 2 պահ.— Շարունակութիւն նախորդ տարուան ծրագրին:

ՁԵՈՒՐՈՒԵՍՆԵՐ. 2 պահ.— Շարունակութիւն նախորդ տարուան ծրագրին:

ՅՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ — ԵՐԷՅԲ

ԿՐՈՆԱԿԱՆ և ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿՐՐՈՒՄԻՆ. 1 պահ.— Քրիստոնէութիւնը, Հայ Եկեղեցին, իր պատմութիւնը և իր նկարագիրը:

— Օգտագործելի՝ Հայոց Եկեղեցին, Մ. Ա. ք. Օրմանեան:

Հայերէն Լեզու և Մասենագրութիւն, 4 պահ.—
Գրաբար. ընթերցում և վերլուծում գլխաւոր դասական
հեղինակներէ. գրաբարէ աշխարհաբար և փոխադարձ
թարգմանութիւն. քերականութիւն: Շարագրութիւն:
Աշխարհագր. միջին դարու աշխարհիկ հեղինակներէ և
Արեւելահայ գրագէտներէ հատընտիր կտորներու ըն-
թերցում և վերլուծում. գրագիտական և մատենագրա-
կան ծանօթութիւններ: Շարագրութիւն:

— Ոսկերեան և Եզնիկ: Գրաբար քերականու-
թիւն, Գարագաշեան: Հայ Գրոզներ:

Ֆրանսերէն. 5 պահ.— Ընթերցում, վերլուծում և
թարգմանութիւն արդի ֆրանսերէնի գլխաւոր հեղի-
նակներէն: Վերատեսութիւն քերականութեան, *prefixes*
et suffixes. Հայերէնէ ֆրանսերէն թարգմանութիւն:
Շարագրութիւններ:

— Textes choisis, Boucley et Garinot. Grammaire,
3^{me} année, Larive et Fleury.

Անգլիերէն. 2 պահ.— Նոյն ծրագիրը անգլիերէնի
կիրարկուած:

— Berlitz Method. The Royal Reader. 4. գիրք:

Արաբերէն կամ Արդի Յունարէն կամ Եթովպերէն.—
2 պահ.— Ոստելավարժութիւն. ընթերցում և թարգ-
մանութիւն. քերականութիւն և ուղղագրութիւն: Շա-
րագրութիւն:

Ուսողութիւն. 6 պահ.— Թագաւոր (1). Վե-
րաքաղ, գլխաւոր տեսութեանց ապացուցմամբ. —
Գրահաշի (2). վերատեսութիւն նախորդ ծրագրին. քա-

նի մը անձանօթով երկրորդ աստիճանի հաւասարութիւններ. յառաջատուութիւնք, նշանակ. խնդիրներ : — Երկրաչափութիւն. (2) վերատեսուութիւն միջոցի և մակարդակի երկրաչափութեան և յուելուած : — Երկրաչափութիւն (1) եռանկիւնաց հաշիւ՝ եռանկիւնաչափական տարազներու միջոցաւ :

— Algèbre, C. Bourlet. Géométrie, Hadamard. Trigonométrie, E. Schiesser .

Բնագիտութիւն. 2 պահ. — Ծանրութիւն. ջրակալութիւն. կազեր : Ձերմութիւն և անոր յառաջ բերած ընդլայնման, հալուածի և ձուլման երեւոյթները : Փորձարկութիւններ բնագիտական աշխատանոցի մէջ :

— Cours élém. de physique (Classe de Seconde), Lemoine et Vincent .

Բնալուծութիւն. 2 պահ. — Բիւրազիտութեան վարկածները և հիմնական սկզբունքները. անուանակոչում և տարազներու դրութիւն : — Մետաղակերպերը, մետաղները : Գործարանային քիմիագիտութեան ծանօթութիւն : — Փորձարկութիւններ քիմիական աշխատանոցին մէջ :

— Chimie élém., (Cl. de Seconde et Première) Matignon et Lamiraud .

Բնապատմութիւն. 1 պահ. — Երկիրը և երկրաբանական երեւոյթները :

— Géologie, E. Aubert .

Աշխարհագրութիւն. 1 պահ. — Եւրոպայի բնական, քաղաքական և տնտեսական աշխարհագրութիւնը :

— Les grandes Puissances du monde, Kergomard .

Պատմութիւն. 2 պահ.— Շարունակութիւն Հռովմի պատմութեան. Բիւզանդիոն. Միջին Դարը Եւրոպայի մէջ, Հայոց Պատմութեան համապատասխան շրջանը:

— Histoire de Rome et du Moyen Age, P. Maillifer.
Հայոց Պատմութիւն, Պալասանեան:

Երաժշտութիւն և Կեռական Մարզանք. 2 պահ.— Ընդլայնում նախորդ տարիներու ծրագրին:

Գծագրութիւն և Գեղագրութիւն. 2 պահ.— Ընդլայնում նախորդ տարիներու ծրագրին:

Ձեռարուեստներ. 2 պահ.— Ընդլայնում նախորդ տարիներու ծրագրին:

ՈՒԹԵՐՈՐԳ ՏՍՐԻ — ԵՐԻՅԱԳՈՅՆՔ

«. Հասարակաց ձիւղեր

Հայերէն Լեզու և Մասենագրութիւն. 4 պահ.— Գրաբար. Ընթերցում և վերլուծում դասական հեղինակներու հատընտիր կտորներու. Լեզուաբանական ծանօթութիւններ. Ֆրանսերէնէ ի գրաբար և փոխադարձ թարգմանութիւն. գրաբար շարագրութիւններ: Աշխարհագր. Շարագրութիւն գրական, գիտական և իմաստասիրական նիւթերով. — Պատմութիւն Հայկական Մարտեր:

հափրութեան. Անգիր դպրութիւն և դասական մատենագիրներ :

— Օգտագործելի՝ Խորենացի, Եղիշէ, Շնորհալի և Նարեկացի : (*)

Փրանսերէն Լեզու և Մասենագրութիւն. 4 պահ.— Փրանսական գրականութեան միջին դարու, վերձնունդի և դասական շրջաններուն գլխաւոր յատկանիշերը և հեղինակները : Ընթերցում, վերլուծում և թարգմանութիւն հատընտիր գործերու և քաղուածքներու : Լեզուաբանական ծանօթութիւններ : Շարագրութիւն :

— Morceaux choisis (classe de première), Fer. Brunnetière. Օգտագործելի՝ Histoire de la Littérature Française, Lanson.

Անգլիերէն Լեզու և Մասենագրութիւն. 2 պահ.— Նոյն ծրագիրը Անգլիերէնի մէջ :

— Cathcart's Literary Reader.

Արաբերէն կամ Արդի Յունարէն կամ Եթովպերէն. 2 պահ.— Խօսելավարժութիւն. ընթերցում, թարգմանութիւն, քերականութիւն, ուղղագրութիւն և շարագրութիւն. Արաբերէնի և Յունարէնի համար գրական ծանօթութիւններ :

Ուսողութիւն. 2 պահ.— Վերատեսութիւն գրահաշիւի և հռանկիւնաչափութեան, խնդիրներու լուծման

(*) Այն ճիւղերուն մէջ որոնց համար գիրք չէ նշանակուած աշակերտները կ'օգտագործեն ուսուցչին դասախօսութեան պահունքներնց առած նօթերը :

առթիւ. — Երկրաչափութիւն. ellipse, hyperbole, parabole.
— Géométrie, Hadamard.

Բնագիտութիւն. 2 պահ.— Լոյսը և ցոլացման ու
բեկման օրէնքները. պրիսմակներ. լոյսի քիմիական
արդիւնքները. գործիքներ: Զայնը և իր յատկութիւն-
ները: — Բնագիտական աշխատանոցի մէջ փորձեր:

— Cours de physique (Cl. de Première) Lemoine et
Vincent.

Բնապատմութիւն. 1 պահ.— Մարդկային բնախո-
սութիւն և կազմախօսութիւն. մարդուն գլխաւոր հի-
ւանդութիւնները և առողջութեան պայմանները:

— Anatomie et phy. humaines, Aubert.

Պատմութիւն. 3 պահ.— Ընդհ. Պատմութիւն. վերա-
ծնունդը և նոր ժամանակները. — Քննական Պատմութիւն
Հայոց. սկիզբէն մինչև իշխանութեան անկումը:

— Histoire (Temps Moderne), P. Maillifer.

Գեղարուեստից Պատմութիւն. 2 պահ.— Գրական-
նութիւնը և միւս գեղարուեստները գլխաւոր ժողո-
վուրդներու մէջ, իրենց զարգացման գլխաւոր շրջան-
ներուն:

Իմաստասիրական Ուսումներ. 4 պահ.— Հոգեբանո-
թիւն. գիտակցութիւնը և իր յատկանիշերը. Զգացա-
կան, իմացական և գործունէական երեւոյթները
և իրենց բազադրումը: Եսը և անձնաւորութեան
կեանքը. մեկնութիւններ հոգեկան կեանքի: — Հոգե-

բանական աշխատանոցի փորձեր. — Ընկերութիւնը, ընկերութիւնը, իր յատկանիշերը և իր ձեւերը. ընկերական գլխաւոր երեւոյթները և անոնց օրէնքները (տնտեսութիւն, ընտանիք, հասարակութիւն, ազգութիւն, պետութիւն, կրօնք). ընկերական կեանքը մեկնող գլխաւոր տեսութիւնները:

— Օգտագործելի՝ Cours de Psychologie, G. Dumas.

Երաժշտութիւն և Կեռական Մարզանք. 2 պահ.— Տեսութիւն երաժշտական գործին գլխաւոր տարրերուն. (Երաժշտական գաղափար և նախադասութիւնք. ներգաշնակութիւն, ռիթմ, երաժշտ. ձեւեր եւ այլն): Սօլֆէժ և երաժշտ. ուղղագրութիւն: Երաժշտութեան՝ պարի վերածման օրէնքները. կշռական սօլֆէժ: Խըմբական և անհատական երգ և պար:

Գծագրութիւն. 2 պահ.— Գծագրութիւն և նկարչութիւն ըստ բնութեան և ազատ. *perspectif*-ի և խմբաւորման գլխաւոր օրէնքները: Կաւով ձեւակերտում: Գծագիրութիւն:

Ձեռարուեսներ. 2 պահ.— Երկրագործական տեսական և փորձնական աշխատութիւններ:

Բ. Հասուածներու Յասուկ ձիւղեր

1. Գարուքեանց եւ Մանկավարժարեան Հասուած

Հայերէն Գրաբարի Աւխասարան. 1 պահ.— Գրական և բանասիրական աշխատութիւններ դասական լեզուի և մատենագրութեան մասին :

Լասիներէն. 2 պահ.— Տարերք լատիներէն լեզուի :

Մանկավարժութիւն. 2 պահ.— Պատմութիւն մանկավարժութեան. — Փորձնական վարժութիւններ տղան ճանչնալու համար :

Գրական Աւխասարան. 1 պահ.— Հեղինակներու սեկնութիւն և բաղդատութիւն. Գրական փորձեր :

2. Գիտութեանց Հասուած

Ուսուցութիւն. 4 պահ.— Յասուածներու Հանրահաշիւ. Բազմեզրերու ընդհ. յարաբերութիւնները և այդ առթիւ կազմութեանց վերլուծում. ոչ արմատական թիւեր եւն. հաւասարութեանց լուծում և այդ առթիւ *déterminant*-ները. *dérivée*-ները և տարերք մասեմաթիքական վերլուծման : — Հասուած Տեսական Մեքենագիտութիւն. կայարանութիւն, շաժարանութիւն և ուժարանութիւն :
— Cours d'Algèbre et de Géométrie Analytique, Tresse et Thibaut.

Բնագիտութիւն. 1 պահ.— Լոյսի և ձայնի երեւոյթներու մաթեմատիքական ներկայացումը:

— Cours de physique (Classe de Math.) Lemoine et Vincent.

Բնալուծութիւն. 1 պահ.— Գործարանային քիմիագիտութիւն.— Քիմիական աշխատանոցի փորձարկութիւն:

— Cours de chimie (Classe de Math.) Mal. et Lam.

3. Առևտրական Հառուած

Տումարակալութիւն և վանառագիտ. 3 պահ.— Վաճառականութիւնը, իր օրէնքները: Վաճառքները, վաճառատան կազմակերպութիւնը, տամարները և անոնց գործածութիւնը:

— Principes de Comptabilité. Léautéy et Guilbault.

Առեւտրական Թղթակցութիւն. Սղագրութիւն և Մեքենագրութիւն. 2 պահ.— Թղթակցութիւն հայերէն, ֆրանսերէն և անգլիերէն լեզուներով:

— Correspondance Commerciale, Henri Page.

Առեւտրական Աւսարհագրութիւն և Պատմութիւն. 1 պահ.— Պատմութիւն առևտուրի, առևտրական մեծ ճամբաները, ներկայի առևտրական մեծ խնդիրները:

— Géographie économique, Kergomard.

«. Հասարակաց Ճիւղեր

Հայերէն Լեզու և Մասենագրութիւն. 4 պահ.—
Գրութիւն. ընթերցում և վերլուծում դասական հեղինակ-
ներէ. Փրանսերէնէ ի գրարար և փոխադարձ թարգ-
մանութիւն. Լեզուաբանական ծանօթութիւններ. Շա-
րագրութիւն: — Արհեստագրութիւն (գրական,
գիտական և իմաստ. նիւթեր): — Հայկական Մարտագրութիւն-
ընդհանրական. Աշխարհիկ գրականութիւնը միջին
դարէն մինչև մեր օրերը:

— Օգտագործելի՝ Խորենացի, Եզիչէ, Շնորհալի,
Նարեկացի:

Ֆրանսերէն Լեզու և Մասենագրութիւն. 4 պահ.—
Ֆրանսական գրականութեան 18-րդ, 19-րդ և 20-րդ
դարու գլխաւոր յատկանիշները և հեղինակները. ըն-
թերցում, վերլուծում և թարգմանութիւն անոնց հատ-
ընտիր գործերուն և քաղուածներու: Լեզուաբանական
ծանօթութիւններ: Շարագրութիւն:

— Morceaux choisis (Classe de Première), F. Brunnetière.
Օգտագործելի՝ Histoire de la Litt. Française, Lanson.

Անգլիերէն Լեզու և Մասենագրութիւն. 2 պահ.—
Նոյն ծրագիրը Անգլիերէնի մէջ:

— Cathcart's Literary Reader.

Արաբերէն համ Արդի Յունարէն համ Երովպերէն.
2 պահ.— Ընթերցում, թարգմանութիւն. քերականութիւն և շարագրութիւն. Արաբերէնի և Յունարէնի համար գրական ծանօթութիւններով:

Ուսովութիւն. 2 պահ.— Գրահաշուի և Երկրաչափութեան խնդիրներ.— Տէլէգրաֆիան. Աստղերը, Արեգակնային դրութիւնը:

— Cosmographie, Tissot.

Բնագիտութիւն. 2 պահ.— Ելեքքրականութիւն և մաքնիսականութիւն. Բաաիօ գործունէութիւն. — Պարբերական ընդհանուր երեւոյթներ:

— Cours de physique (Classe de Première) Lem. et Vincent.

Բնապատմութիւն. 2 պահ.— Կենսաբանական գլխաւոր երեւոյթները, բնաշրջումը և յարակից վարկածները:

— Biologie, Kollmann.

Պատմութիւն. 3 պահ.— Բնական Պատմութիւն Հայոց. Շարունակութիւն նախորդ տարիէն. հայ կեանքը մինչև մեր օրերը. Հայկական Հանրապետութիւնը, աշխարհագրութիւն. — Ընդհ. Պատմութիւն. Ժամանակակից շրջան:

— Histoire Contemporaine, P. Maillefer.

Իմաստասիրական Ուսումներ. 5 պահ.— Իմաստասիրութիւնը Արեւելեան կրօնքներուն, Յոյներուն և Հռովմայեցիներուն մէջ:

Միջին դարու և նոր ժամանակներու իմաստասիրութիւն: Ժամանակակից դէմքեր.— Իմաստասիրական խնդիրները ներկայիս (տեսութիւն).— Գեղեցկագիտութիւն, արուեստները և արուեստագիտական ուղղութիւնները. գեղեցկութեան և արուեստի դաղափարներուն քննութիւնը. գեղարուեստը հանդէպ բարոյականի, գիտութեան և կրօնի:— Տրամաբանութիւն. գիտութիւնները և իրենց մէթոտները. մտածման ընդհ. պայմանները. սխալը. ճշմարտութեան ստուգանիչի խնդիրը. ճշմարտութիւնը և միւս արժէքները: Բարոյագիտութիւն. Անհատական և ընկերային կեանքի բարօրութեան պայմանները. բարոյագիտական ուղղութիւնները. քննութիւն բարւոյ գաղափարին. բարոյականը, միւս արժէքները և կրօնքը:

— Օգտագործելի՝ Histoire de la philosophie européenne, Weber.

Երաժշտութիւն և Կեռական Մարզանք. 2 պահ.— Շարունակութիւն նախորդ տարուան ծրագրին:

Գծագրութիւն. 2 պահ.— Շարունակութիւն նախորդ տարուան ծրագրին:

Ձեռարուեսներ. 2 պահ.— Շարունակութիւն նախորդ տարուան ծրագրին:

բ. Հասուածներու Յասուկ* ձիւղեր

1. Գպրութեանց եւ Մանկավարժութեան Հատուած

Հայերէն Գրաբարի Աւխասարան. 1 պահ. — Գրաբարի եւ միջնադարեան ու գաւառիկ աշխարհաբարի ուսումնասիրութիւններ :

Լատիներէն. 2 պահ. — Շարունակութիւն լատիներէնի տարերց ուսման :

Մանկավարժութիւն. 2 պահ. — Տեսական եւ գործնական մանկավարժութիւն. — Գպրոցի կազմակերպութիւն, դասաւանդութեան եւ դաստիարակութեան գործնական վարժութիւններ :

Իմաստասիրական Աւխասարան. 1 պահ. — Իմաստասիրական հեղինակներու մեկնութիւն. իմաստ. շարադրութիւն :

2. Գիտութեանց Հատուած

Ուսողութիւն. 4 պահ. — Վերլուծական երկրաչափութիւն. Մակարդակային ձեւերու վերլուծական քննութիւն. (գիծ, բոլորակ, կոնսաձեւ հատուածք). միջոցի ձեւերու վերլուծական քննութիւն. (մակարդակ, գունտ, անհարթ կոր գիծեր, *ellypsoide*, *hyperbolide* եւն

détermination des quadriques. — Գծադրական Երկրաչափություն . Միջոցի ներկայացումը մակարդակին վրայ, գլխավոր ձևեր . *épure* .

— Cours d'Algèbre et de Géom. Analytique . Tresse et Thibaut .

Բնագիտութիւն . 1 պահ . — Ելեքդրականութիւն , մաքնիսականութիւն , Ռատիօ գործունէութիւն իրենց մաթեմատիքական ներկայացմանց մէջ :

— Cours de physique (Classe de Math.) , Lemoine et Vincent .

Բնալուծութիւն . 1 պահ . — Վերլուծական քիմիագիտութիւն և տարերք բնալուծական մեքենագիտութեան . — Աշխատանոցի մէջ փորձարկութիւններ :

— Chimie Analytique , Clerc .

3. Առեսարական Հատուած

Տոմարակալութիւն և Ելեմսագիտութիւն . 3 պահ . — Շարունակութիւն վաճառատան հաշիւներու . Ելեմտական մեծ հաստատութիւնները և անոնց գործառնութիւնները . գրամատանց , սակարանի և պետական պաշտօնատանց հաշիւներ :

— Traité des opérations de Banque, de Bourse et de Change, Ch. Lejeune .

Առեսարական քրթակցութիւն , Սղագրութիւն և Մե-

Բենագրութիւն. 2 պահ. — Թղթակցութիւն Հայերէն Ֆրանսերէն և Անգլիերէն լեզուներով :

— Correspondance Commerciale, Henri Page.

Առեւտրական Տնտեսութիւն և Օրէնսգիտութիւն. 1 պահ. — Առեւտրական տնտեսութիւնը և անոր օրէնագիտութեան տարերքը :

Գ. ԱՇԱԿԵՐՏՈՒԹԻՒՆ

ա. ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՆ

Դպրոցական սարին կ'սկսի Սեպտեմբերին սկիզբը. առաջին շաբաթը կը յատկացուի մտից քննութիւններու եւ վերաքննութեանց: Դասերը կանոնաւորաբար կ'սկսին երկրորդ շաբթուան սկիզբէն: Տարւոյն մէջ փոքր արձակուրդներ կան. Կաղանդին մէկ շաբաթ, Բարեկենդանի առթիւ չորս օր եւ Զատիկին ինը օր: Մեծ արձակուրդը կ'սկսի Յունիսի մէջ եւ կը տեւէ մինչեւ Ռոստոսի վերջը:

բ. ԺԱՄԱՆԱԿԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ

Արտաւարձ

Ժամը 6.30 — 6.50	Զարթնում եւ Հարբարանք
» 6.50 — 7.20	Ազատ Զբաղում
» 7.20 — 7.50	Նախաճաշ եւ Հանգիստ
» 7.50 — 8	Աղօթք
» 8 — 8.50	Ա. Դասապահ
» 8.50 — 8.55	Դադար
» 8.55 — 9.45	Բ. Դասապահ
» 9.45 — 10.15	Մարզանք եւ Դադար
» 10.15 — 11. 5	Գ. Դասապահ
» 11. 5 — 11.10	Դադար
» 11.10 — 12	Դ. Դասապահ
» 12 — 1.30	Ճաշ եւ Հանգիստ

Երեկոյ

Ժամը	1.30 — 1.20	Ե. Դասապան
»	2.20 — 2.30	Դադար
»	2.30 — 3.20	Զ. Դասապան
»	3.20 — 3.30	Դադար
»	3.30 — 4.20	Սերսողութիւն
»	4.20 — 5.40	Աղօթք, Նախընթրիք եւ Հանգիստ
»	5.40 — 7.30	Սերսողութիւն
»	7.30 — 8.15	Ընթրիք եւ Հանգիստ
»	8.15 — 9.15	Ընկերն. Կեանք կամ Ազատ Զբաղում
»	9.15 — 9.30	Ննջարան
»	9.30	Նինջ

Վերոգրեալ ժամանակացոյցի առաւօտեան չորս դասապաները կը յսկացունին լեզուներու եւ գիտութեանց. կէս օրէ վերջի երկու դասապաները առաւելապէս գեղարուեստից եւ ձեռարուեստից: 3.30 — 4.20-ի սերսողութիւնը քե՛զի գիշերօթիկ եւ քե՛զի ցերեկեայ աշակերտները կ'ընեն դպրոցին մէջ, օրուան դասերուն աւերն սրուած գրաւոր պարսկանութիւնները կասարելու համար: Յետոյ ցերեկեաները կը մեկնին տուն:

Այս ժամանակացոյցը կը կրկնուի շաբաթուան բոլոր օրերուն համար, բացի շաբաթ կէս օրէ վերջէն ուր դասաւանդութիւն չի կայ: Գիշերօթիկները կ'զբաղին այդ ժամերուն մարզանքով, ազատ պարապումներով, սփառփական վարժութիւններով: Շաբաթ կէս օրէ վերջ կը դրուին նաեւ ընդհանրապէս, գիտական պատշաճութիւնները: Կիրակի առաւօտը յսկացուած է եկեղեցիի. կէս օրէ վերջը հանգիստի եւ պատշաճ կամ դպրոցական հանդիսութեանց:

Գ. ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Բոլոր առակերտները պէտք է նշուքեամբ հետեւին վարժարանին կեանքին եւ կանոններուն. կասարենց իրենց զանազան պարսականութիւնները: Լուրջ ջանասիրութիւնը դասերուն եւ զանազան վարժութիւններուն մէջ Պերպերեան վարժարանի առակերտներն աւանդութիւնը եղած է միշտ:

Յերեկեայ առակերտը պէտք է խիստ կանոնաւորութեամբ յանախե վարժարան: Բացակայ **Յերեկեաներ** յութիւնները աններելի են: Ծնողք կը հրաւիրուին այս մասին նոյն խստութեան: Յերեկեայ առակերտը պէտք է դպրոց գնուի առաւօսուն 8-ին 10-ը մնացած, մասնակցելու համար առաւօսեան աղօթքին: Առաւօսեան դասաժամերու աւարտան, ժամը 12-ին, կրնայ տուն երթալ նաեւելու. ժամը 1 1/2-ին վերսին վարժարան ներկայ ըլլալու համար: Փափափողները կրնան իրենց նաւը վարժարան բերել եւ մասնակցիլ ցերեկեաներու սեղանին: Վարժարանը նաեւ, մասնաւոր վնարման մը փոխարէն գիշերօթիկներուն հետ ցերեկի նաւ կուտայ փափափող ցերեկեայ առակերտներուն: Յերեկեայ առակերտը կը մեկնի վարժարանէն երեկոյեան ժամը 4.20-ին: Իր տան մէջ պէտք է առնուազն 2 ժամուան սերտօլութիւն մը ընէ. ծնողք այս մասին պարտաւոր են լրջօրէն հոգ տանիլ: Շաբաթ կես օրէ վերջ եւ կիրակի օրեր ցերեկեաները իրենց ծնողաց մօտ կ'անցընեն. բայց գիտական պտոյտներու պարագային պարտաւոր են մասնակցիլ, ժամանակին վարժարան ներկայ գնուելով:

Գիշերօրիկ աշակերտները իրենց կարգին կը հետեւին վերեւ դրուած ժամանակացոյցին. **Գիշերօրիկներ** նաշերը կ'ընեն խմբովին եւ մասնակցութեամբ իրենց ուսուցիչներուն: Առաւօտուն կը սրուի կար կամ քէյ, հետք պանիր կամ անուշ եւ հաց: Կես օրին երկու սեսակ կերակուր, մին մտով, եւ միւր կամ անուշ: Նախընդրիին՝ հաց եւ պանիր կամ շոշոշ: Ընթրիին՝ ապուր, մէկ սեսակ կերակուր մը եւ անուշեղեն կամ մրգեղեն:

Վարժարանը կ'ընծայէ գիշերօրիկ կեանքի այլ բոլոր պայմանները, լոգանք, հերձակեղէններու լուացք, պրոսոսներ եւայլն:

Ամսագլխու եւ արձակուրդներու առթիւ միա՛յն գիշերօրիկ աշակերտը կ'արտօնուի հեռանալու վարժարանէն իր ծնողաց կամ պաշտպանին տունը երթալու համար: Ան այս կը սրուի իրեն արտօնագիր մը որուն վրայ ծնողքը կամ պաշտպանը պարտի ստորագրած ըլլալ վերադարձին:

Գիշերօրիկ աշակերտը իբր իր ընտելալ միջավայրը պիտի սիրէ դպրոցը ու բոլորանուէր ապրի անոր կեանքը:

դ. ՔՆՆՈՒԹԻՒՆՔ ԵՒ ԿԱՐԳԱՓՈՒՍՈՒԹԻՒՆ

Աշակերտաց աշխատութիւնն ու յառաջդիմութիւնը կը զնահասուին բացի դասաժամերու միջոցին անոնց ներկայացուցած գրաւոր պարտականութեանց եւ բրած բերանացի արտայայտութեանց միջոցաւ, նաեւ պարբերական գրաւոր քննութիւններով, որոնք տեղի կ'ունենան երկուուկէս ամիսը անգամ մը. առաջինը Նոյեմբերի մէջ, երկրորդը Յունվարի վերջը, երրորդը Ապրիլի

սկիզբը : Յունիսի սկիզբը տեղի կ'ունենայ սարեկան բե-
րանացի ֆննուքիւնը զոր առակերտը կ'անցնէ ամբողջ
սարուան ընթացքին իր տեսած նիւթերուն վրայ :

Դասածամերու միջոցին առակերտաց արտայայտու-
թիւններն կը գնահատուին ուսուցչին կողմէ իր տեսակին
մէջ : Ուսուցիչը այդ գնահատումները կը բաղադրէ պարբե-
րական ֆննութեան արդիւնքին հետ եւ այսպէս, երկու ֆուկեա
ամիսը անգամ մը, իւրաքանչիւր առակերտ 10-էն 0 սարբե-
րող թիւ մը կ'ստանայ իւրաքանչիւր նիւղի համար : Այսպէս
ստացուած երեք թիւերու միջինը, երեք առ երկուքի
համեմատութեամբ, կը բաղադրուի սարեկան ֆննութեան
արդիւնքը արտայայտող թիւին հետ եւ կը կազմուի իւրա-
քանչիւր նիւղի համար սարեկան միջին թիւ մը : Իսկ բոլոր
նիւղերու այս միջին թիւերու միջինը կը կազմէ առա-
կերտին սարեկան ընդհ. միջին թիւը :

Առակերտը իր կարգը կը փոխէ երբ իր սարեկան
ընդհ. միջին թիւը 6-էն վեր է, եւ իւրաքանչիւր նիւղի
մէջ ալ յաջողած է 5-էն վեր միջին մը ունենալ : Երբ
իր սարեկան միջին թիւը 6-էն վեր է բայց մինչեւ երեք
նիւղի համար չէ յաջորած 5-էն վեր թիւ ունենալ, այդ
նիւղերուն մէջ Սեպտեմբերին յաջողապէս վերաֆննուե-
լով կրնայ կարգը փոխել : Առակերտը կը կրկնէ իր կարգը
եթէ սարեկան միջին թիւը գոնէ 6 չէ կամ երեքէն աւելի
նիւղերու մէջ տկար ներկայացած է :

Ե. ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ ԵՒ ՊԱՏԻԺՆԵՐ

Առակերտին ջանքն ու յառաջդիմութիւնը բարոյական
Ֆիզիքական եւ իմացական մար-
Գնահատումներ գերուն մէջ, վերոյիշեալ միջոց-
ներէն զոս կը գնահատուին նաեւ սարուոյն վերջը զանա-

զան նիւղերու համար մրցմանց առթիւ տրուած ա. բ. գ. աստիճանի մեքայլներով եւ մրցանակներով: Վարժարանին մեծ մրցմանց օրը, որ ի յիշատակ հին Հայաստանի նոյնօրինակ մրցահանդեսներուն Նաւասարդեան Օր կը կոչուի, արտասանութեան, երաժշտութեան, հրապարակախօսութեան, գրականութեան, Հայկական եւ Բնագրական պարերու մրցումները, զժագրական ու ձեռարուեստական ցուցահանդեսները, յունական եւ անգլիական մարզախաղերը նպատակ ունին յայտնագործելու արդարեւ, աստիճանը այն նիգի կարողութեան եւ կամփին, զոր աշակերտները յաջողած են ձեռք բերելու այդ ազնիւ գործունեութեանց մարզերուն մէջ: Ու պատանի հոգիները առաջին յաղթանակներ կը նանչնան այդ օրը...

Առաքինութեան յատուկ մրցանակներ կը պատկեն վերջապէս, այն աշակերտները որ նոյն տարւոյն մէջ ամենեւն աւելի բարոյական արժեքով կրցած են հարստցնել իրենց անձը:

Այն պատիժները զորս կուտայ վարժարանը ընտրուած են իրենց անմիջական բարոյացուցչութեան շնորհիւ. ահաւասիկ գլխաւորները:

1. Արձանագրեալ Յանդիմանութիւն. որու ենթակուող աշակերտին անունը եւ յանձանքը կ'արձանագրուի իր դաստիարակներուն եւ ընկերներուն ներկայութեան կարգադրելու համար:

2. Ինքնագատժում. որու ենթակայ աշակերտը կը հրավիրուի ինքզինքին համար սահմանելու իր արարքին համապատասխան զրկում մը:

3. Պատժում. Աշակերտին արարքին համապատասխան զրկումը վարժարանին կողմէ կ'որոշուի:

4. Տնօրինական Յանդիմանութիւն. որու ենթական կը ներկայանայ Տնօրէնութեան անկէ լսելու համար իր արարքին արժանի կէսամբանքն ու խրատը :

5. Կախակայում Դպրոցական Կեանքէ. այս պատճոյ ենթական առակերտը դպրոցը մնալով հանդերձ կը զրկուի մասնակցելէ իր ընկերներուն կեանքին :

6. Կախակայում Դպրոցէ. առակերտը կը զրկուի աստուան մը համար դպրոց յանախելէ :

7. Վերջնական Վատրում դպրոցէ :

գ. Վ Ի Ճ Ա Կ Ա Յ Ո Յ Յ

Երկուք ու կես ամիսը անգամ մը վարժարանը կը ներկայացնէ ծնողաց, առակերտին Ֆիզիքական Իմացական եւ բարոյական վիճակացոյցը :

Ծնողք անոր մէջ կը գտնան. Ֆիզիքականին համար, իրենց զաւակին հասակին, ծանրութեան, շնչային կարողութեան, մկանային ոյժին, աչքին, ականջին, ակուսներուն եւ ընդհ. առողջութեան մասին չափեր եւ բժշկական հաւաստումներ., Իմացականին համար, զանազան ուսմանց նիւղերու մէջ անոր ստացած քիւերը., Բարոյականին համար, իր վարքին եւ նկարագրին զանազան կէտերուն մասին դաստիարակին դասողութիւնները :

Այս առթիւ Տնօրէնութիւն եւ ծնողք կը փոխանակեն իրենց փոխադարձ դիտողութիւններն առակերտին ընդհանուր վիճակին մասին :

Դ. ԸՆԹԱՑՄԱՒԱՐՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԿԱՅԱԿԱՆ

Պերպերեան վարժարանի Աւագ կարգը հասնող աշակերտք կ'ըլլայ քեկնածու ընթացաւարտութեան վկայականին եւ անոր ընձեռած Պսակաւորի Ասիճանին :

Պսակաւորութեան քեկնածուն ստանալու համար վկայականը եւ այդ ասիճանը պարտի ,

ա. վերջի տարւոյ ընթացքին պատաստել եւ Մայիս 1-ին յանձնել աւարտական փորձ մը որ ուսումնասիրութիւն մը պէտք է ըլլայ իր կողմէ առաջարկուած եւ Տնօրէնութեան կողմէ ընդունուած նիւթի մը վրայ :

բ. Ամբողջովին լրացնել Աւագ դասարանի կարգափոխութեան պայմանները եւ յաջողապէս անցնել աւարտական քննութիւնները :

գ. Պատշապանել իր աւարտական փորձը Տնօրէնութեան նախագահութեամբ կազմուած քննիչ մարմնոյն առջեւ :

Պերպերեան վարժարանը կուտայ իր ընթացաւարտներուն երկրորդական ուսմանց վկայական, եւրոպական եւ ամերիկեան երկիրներու Պսակաւորի — *Bachelier*-ի — ասիճանով :

Իպրութեանց բաժնի աշակերտին վկայականը կը կրէ Պսակաւորի էտրէ — *Bachelier ès Lettres* յիշատակութիւնը . զիտութեանց բաժնի աշակերտինը՝ Պսակաւորի էտրէ — *Bachelier ès Sciences* — , եւ

առեւտրական բաժնի առակերտինը՝ *Bachelier ès Sciènes Economiques* — յիշատակութիւնը :

Բայց այս երեք տեսակի վկայականներէն իւրաքանչիւրը թէ դպրութեանց եւ թէ գիտութեանց համար միջնակարգ ուսմանց պատկաւորի աստիճանը կ'ենթադրէ :

Ըստ այսմ Պերպերեան վարժարանի վկայականը պատկանական յայտարարութեամբ
Վկայականի իրաւապէս եւ իրապէս կը
Ընձեռած Իրաւունքերը նանշցուի Ֆրանսական Հա-

մալսարաններու կողմէ որոնք անոր կուտան Ֆրանսական *Baccalauréat*-ի *équivalence* — համարժեքութիւն : Գերմանական, զուիցերիական, ամերիկեան, քրեական եւն, համալսարաններն ու հարստագիտական վարժարաններն ալ նոյնպէս առանց քննութեան կ'ընդունին վարժարանին վկայականը կ'ող առակերտը :

Բայց աստի, մասնաւորաբար առեւտրական բաժնէն վկայեալ մը, դիւրութեամբ կը մտնէ առեւտրական եւ ելմական մեծ ընկերութեանց եւ պատշտասանց մէջ որոց համար յատուկ պատրաստութիւն մը ստացած է :

Ե. ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Պերպերեան Վարժարանի Տնօրէնութիւնը շանադիր եղած է միշտ հայ քեօսար ուսուցչական լաւագոյն ոյժերով օժտելու վարժարանը: Իր ընտրութիւններուն մեջ վկայականներու հետ դաստիարակչական տաղանդը մանաւանդ կը փնտռէ եւ կը գնահատէ:

Տնօրէնները իրենք անմիջական մաս մը կ'առնեն դաստիարակութեան եւ ուսուցման գործին մեջ. մեկ կողմէ ուղղութեան որոշ միութիւն մը ստեղծելով բոլոր դասաւանդութեանց, վարժութեանց եւ կրթական այլ գործունէութեանց մեջ, միւս կողմէ գլխաւոր եւ եական նիւղերը իրենք իսկ դասախօսելով:

Վարժարանին ուսուցչական մարմինը կազմուած է երկու կարգի ուժերէ:

Ա. Դաստիարակ-Ուսուցիչներ որոնք կը մնան միշտ, կը բնակին վարժարանին մեջ ու կ'ապահովեն կարգ մը դասերու աւանդման հետ, նաեւ մասնաւորաբար աշակերտաց դաստիարակութիւնը, մշտապէս մասնակցութեամբ անոնց կեանքին: Իւրաքանչիւր դասարան իրեն գլուխը ունի դաստիարակ-ուսուցիչ մը որ մօտէն կը հետեւի իրեն յանձնուած աշակերտներէն իւրաքանչիւրին կեանքին, ջանասիրութեան, եւ ընդհանուր դասարանին հաւաքական կեանքը բարձր բռնել կ'աշխատի:

Գ. Սյնիւո Մասնագէտ Ուսուցիչներ որոնց յանձնուած են բուն երկրորդական բաժնի զանազան նիւղերը: Տնօրէնութիւնը հոգ կը շանի որ այցելու ուսուցիչները օտար եւ անտարբէր չի մնան վարժարանին ընդհանուր կեանքին. առ այս շատ մը առիթներ կ'ստեղծէ դասերէ դուրս գործակցութեան մը իրենց՝ դասաւարտակ ուսուցիչներու եւ աշակերտաց միջեւ:

Տնօրէնութեան նախագահութեամբ պարբերաբար կը գումարուին նաեւ ուսուցչական ժողովներ:

ա. Դաստիարակչական Ժողովը որուն կը մասնակցին դաստիարակ-ուսուցիչները ամէն շաբաթ կը գումարուի եւ կ'զբաղի մասնաւորաբար աշակերտներու բարոյական եւ ֆիզիքական վիճակովը:

բ. Ընդհ. Ուսուցչական Ժողովը որու կը մասնակցին բոլոր ուսուցիչները կը գումարուի տարին քանի մը անգամ, զբաղելու համար աշակերտներու ուսումնական վիճակովը մանաւանդ:

Զ. ՆԱԽԿԻՆ ՍԱՆԵՐ

Պերպերեան Վարժարանը իր շուրջ կիսադարեան անխաբան գործունեութեամբը հայ ներկայ հասարակութեան մեջ կը հաշուէ նախկին սաներու պատկանելի թիւ մը . յոջանաւարները 500-է աւելի են . իսկ թերաւարներու թիւը քանի մը հազարի կը հասնի :

Պերպերեան նախկին սաները իրենց թիւէն զատ իրենց որակով մանաւանդ ակնառու տարր մը կը կազմեն ազգին մեջ : Արդարեւ խիստ շատ են անոնք որ իրենց ընդգրկած ասպարեզին մեջ — եկեղեցական, պետական, ելեւմտական, առեւտրական, բժշկական, իրաւագիտական, նարսարագիտական, ուսուցչական, գրական, գեղարուեստական են . — յայտնի անուն մը եւ արդար համբաւ մը վաստակած են . եւ ասիկայ լաւագոյն վկայութիւնը եւ փաստը եղած է միտք , Պերպերեան Վարժարանին տուած դաստիարակութեան գերազանցապէս արդիւնագործ հանգամանքին :

Պերպերեան նախկին սաները կը պահեն ամենքն ալ իրենց արժին մեջ յուզիչ յիշատակ մը իրենց դպրոցական տարիներէն եւ երախտագիտական զգացում մը իրենց հոգեկան օրրանին եւ անոր մեծանուն Հիմնադրին հանդէպ :

Այդ զգացումը միշտ մղած է զանոնք իրարու ֆոյ
զալու . անոնք հիմնած են Պերպերեան Սանուց Միու-
թիւն մը որ նպատակ ունի գործակցութիւն մը յառաջ
բերել բոլոր Պերպերեան նախկին սաներուն միջեւ ,
իրենց հոգեկան ազգականութեան կապը զօրացնելու
եւ զայն արդիւնաւոր գործօնի մը վերածելու համար :

Ամեն՝ սարի վարժարանին Նոր Հունձֆին օրը , հան-
դեսէն վերջ , նախկին սաները կ'ունենան սարեկան խնջոյք
մը որու ընթացքին իրենց մէջ կ'ընդունին նոյն սարուան
շրջանաւարտները :

Ուրախ ենք յայնելու որ Պոլսոյ նման , Գահիրէի մէջ
ալ կ'ազմուած է միութիւնը , որմէ աւագոյն արդիւնք-
ներ յուսալ արդար է :

Է. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Պերպերեան վարժարանի աշակերտ կ'ընդունուին առնուազն ութը տարեկանը ամբողջացուցած հայ տղաք:

Ներկայացող աշակերտը պարտի հետք ունենալ 1. Ծննդեան վկայականը. 2. Պատուաստի վկայականը. 3. Եթէ ուրիշ վարժարանէ մը կուգայ, իր ուսման եւ վարուց վերջին վիճակացոյցը:

Աշակերտը կ'անցնէ մտից փոքր քննութիւն մը եւ կը դրուի իր ուսումնական վիճակին համապատասխան կարգը: Ազգային նախակրթարան մը աւարտած աշակերտը կը մտնէ Կրօնքազոյն դասարանը: Գահիրէի եւ Աղեթսանդրիոյ ազգային վարժարանները ըլլալով բարձրագոյն նախակրթարաններ անոնց շրջանաւարտները պիտի դրուին Երեք կարգը: Ուրիշ համարժեք Հայ կամ օտար երկրորդական վարժարանէ մը եկող աշակերտը կը մտնէ համապատասխան դասարանը: Դասարանի որոշման մեջ սակայն, աշակերտին զարգացման անձնական աստիճանը ի նկատի կ'առնուի միշտ:

Յերեկեայ աշակերտը կը վճարէ տարեկան 10 եգ. ոսկի:

Յերեկեաներ

Այն ցերեկեայ աշակերտները որ կը փափաքին վարժարանէն ըստանալ իրենց ցերեկուան հաշը պարտին ամսական 1 1/2 եգ. ոսկի աւելի վճարել:

Գիշերօթիկ աշակերտք կը վնարէ սարեկան 50 եգ. ոսկի. այս գումարին մեջն են

Գիշերօթիկներ

ներմակեղեկներու լուացք, բժշկական պարբ. քննութիւն, լոգանք :

Նղբայրներու համար Տնօրէնութիւնը կ'ընէ $\frac{1}{10}$ զեղջ մը :

Գիշերօթիկ աշակերտք իր հետ կը բերէ՝ 3 զոյգ սաւան (3 մէքր երկայնքով եւ 1.80 լայնքով), 6 երեսի սրբիչ, 4 սեղանի անձեռոց, 6 ձեռք ներքին ներմակեղէն, 4 գիշերանոց, 8 զոյգ գուլպայ, 12 քաշկինակ, 4 ձեռք հագուստ (մին սփառակազմ համազգեստ), 2 գլխարկ, 3 զոյգ կօշիկ, 1 զոյգ հողաքափ, 1 փոքր գորգ անկողնի առջեւ դրուելու համար, 1 մծեղարգել :

Վարժարանը ինք կը հայրայթէ մահնակալը եւ անկողինը :

Նրբ գիշերօթիկ աշակերտին ծնողքը կը բնակի Գահիրէէ դուրս, պէտք է աշակերտը ունենայ բարոյական եւ նիւթական պատասխանատուութիւն ստանձնող պատշապան մը Գահիրէի մէջ :

Նգիպտոսէ դուրս բնակող գիշերօթիկ աշակերտներուն նգիպտոս մուտքին համար Տնօրէնութիւնը կ'ընծայէ մասնաւոր դիւրութիւններ :

Գիշերօթիկ եւ ցերեկեայ աշակերտաց սարեքուակին

Վնարմանց

Յղանակ

վնարումը տեղի կ'ունենայ կանխիկ երկու մասնավնարներով. առաջինը աշակերտին մուտքին օրը, երկրորդը 1 Փետրուարին: Ծնողաց դիւրութեան համար, սակայն, վարժարանը կ'ընդունի նաեւ միամտեայ կանխիկ մասնավնարներու դրութիւնը :

Կիսամեակի մը ընթացքին բացակայող, ուժ դարոց մեկնող, կանուխ մեկնող կամ հրաժարող գիշերօթիկ կամ ցերեկեայ առակերսին համար վարժարանը զեղջ կամ վնասուած գումարին յեսս հասուցում չի ընէր :

Գիշերօթիկ եւ ցերեկեայ առակերսներու գրեմական պիտոյից ծախքերը, ինչպէս եւ փոխադրութեան ծախքերը ծնողաց վրայ են :

Բանակցութեանց եւ արձանագրութեանց համար ծնողք կրնան դիմել վարժարան, ամէն օր առաւօտեան ժամը 9-էն 12 :

Տեղեկութեանց եւ գրաւոր բանակցութեանց համար դիմել Տնօրէնութեան հասցեին՝

B. P. 1619, Le Caire-Egypte.

ՏՊԳՐ. Զ. ՊԵՐՊԵՐԵԱՆ, ԱՊՑԻՆ-ԳԱՀԻՐԷ